

20064

85-199

U-93

2003

891.99-192

Ն-93

47

ՆՈՐ

# ԵՐԳԱՐԱՆ

ՎԱՄ

## ՄՐՄՈՒՆՁ ՀԱՅՎԱԿԱՆ



Բ. ՏՊԱԳՐՈՒԹԻԻՆ

Բարեխոխեալ եւ ձոխացեալ

1001  
854



ՏՊԱՐԱՆ «ԻՐԱԿՈՒՆԵՐ» ԼՐԱԳՐԱՅ

1901

192

4541

## ՅԱՌՕՋԱԲԱՆ

Նոր երգարանի մը անմիջական պէտքը մեզ հարկադրած էր 1897 ին որչափ կարելի էր փութով հրատարակել ՄՐՄՈՒՆՉ ՀԱՅԿԱԿԱՆԻ Ա. տպագրութիւնը: Այդ գրքոյք թէեւ իր թերի կոպտերը ունէր, բայց ամեն հայ դաղթավայրերէ եղած խնդրանքը եւ դնոյն ամանութիւնը անոր սպասման զիւրութիւն տուաւ այնպէս որ այսօր մեզ հասած նոր յանձնարարութիւններ քաջայերեցին զմեզ ՄՐՄՈՒՆՉ ՀԱՅԿԱԿԱՆԻ Բ. Տպագրութիւնը լոյս ընծայել ճոխացած ու բարեփոխուած:

Ազգի մը վիճակին եւ իղձերուն նկարագիրը կ'անդրադառնայ իր երգերուն մէջ, որոց յարատեւ յեղյեղումը հայրենասիրութեան ոգոյն ծաւալման ամենէն զօրաւոր ազդակներէն մէկն է. եւ զորս իբր նուիրական աւանդ պահպանել եւ յաջորդ սերունդներուն յանձնել ազգային պարտականութիւն մըն է:

Մենք այս պարտականութիւնը անգամ մը եւս կատարած ըլլալ կը կարծենք այս երկրորդ տպագրութեամբ, զոր, տարակոյս չունինք, մեր պատարժան ազգակիցները արժանի պիտի դատեն կրկին իրենց ջերմ ընդունելութեան:

1901 Յունիս 18

Վառնա

Հրատարակիչ

Յ. Գ.

# ՄՐՄՈՒՆՋ ՀԱՅԿԱԿԱՆ

## Մ Ա Ղ Թ Ա Ն Ք

Տէր՝ կեցո՛ դու զՀայս

Եւ արա՛ զնոսա պայծառ .

Կեցո՛ զՀայս

Զողորմութիւնդ վերին

Հաճեա՛ ձօնել նոցին ,

Զի նովաւ մարթոսցին

Ապրել յաստիս :

Ո՛վ Տէր մեր , Տէր փութա՛ ,

Զազգ մեր համայն փրկեա՛

ի Թշնամեաց

Կափո՛ զաչ՝ նոցուն ,

Հատ զարմատոցն ըզբուն ,

Եւ զարգ մեր պարտասուն

Արա՛ հրգօր :

ի ք՝ իջեալ տեղի

Զաթոռ Հայրապետի

Մեր հաստատեա՛ .

Զերկարութիւն կենաց

Հօր մեր աստուածազգեաց ,

Շնորհեա՛ պետին մեր հարց

Որ զմեզ հովուէ :

Աջովդ համատորած

Զազգ մեր արտահալած

Փոյթ գումարեա՛

Յաշխարհ Արարատեան  
ի վայր մեր ծննդեան  
Որ այժմ է սեփհական

Օտարազգաց :

Առաքեալ՝ ք բարձանց  
Չհամակցութիւն կամաց

ի մերազնեայս

Զոմբն ի մէջ յարս

Պաշտպան ազգի մերոյ

Տուր նմա ցուպ հոժիւր

Հովուել բզմեց :

Մ. Դ. Թամիսպետանց



### ՏԱԼԻՈՐԻԿԻ ՔՈՅԼԵՐԳԸ

Տալորի կտրիճ եմ զորթ  
Քաղքցու պէս չեմ թույլամարթ  
Սարի զաւակ քարի որդի  
Հին քաջ Հայոց եմ մնացորդ :

Տալորիկի զաւակ եմ քաջ  
Չեմ խոնարհիր թրքին յառաջ  
Քարուտ յերանց եմ ազատ յաճ  
Պեմ տեսեր արօր և ոչ մաճ :

Հայ ազբրտիք, վայ ազբրտիք  
Տալորիկի զաւակ եմ քաջ,  
Ազատութեան սիրոյն համար  
Եկէք դէպ ինձ յառաջ յառաջ :

Երբ իմ աչս բացի յաշխարհ  
Ազատ տեսայ մեր սար ու քար

Մինչ չ'փակեմ աչս ի խաւար  
Պիտ չ'կոխէ հոս ստք օտար :

Իմ մամ ծնաւ զիս սարերու ծոց,  
Ինձ ընկոյղ կոճղ մ'եղաւ օրորոց  
Տըկոյղ ծնայ մեծցայ տըկոյղ,  
Կեանքիս բաժինն է կռիւ ու բոց :  
Հայ ազբրտիք եւն. :

Ոտքս բոպիկ սիրտս միշտ բաց  
Ինչ փոյթ թէ քոյրս ալ մերկ մնաց  
Ինձ մօտ մէկ է արեւ բուք ցուրտ,  
Բաւ է չ'իշխեր հոս թուրք կամ քիւրտ :

Իմ կեանքս խիտ է և չարքաշ  
Փափուկ կեանքի վայելել չեմ վարժ  
Բնակարանս է ապառաժ,  
Ընկերս մորիկ ու երկրաշարժ :

Հայ ազբրտիք եւն. :

Հարստութիւն, ուսում, հանճար,  
Փառք և պատիւ չեն ինձ համար,  
Բաւ է ունիմ ճէկ, թուր, ղէնչար,  
Բա՛ւ չ'խրոխտայ վրաս օտար :

Սիրած ղէնքս չեմ ձգեր ձեռքէս,  
Առիւծն անկախ չէ նման ինձ պէս .  
Կր սիրեմ ես, կռիւ, աւար,  
Կ'սպասեմ մինչ ընկնի հաւար :

Հայ ազբրտիք, եւն. :

Հաւա՛ր ընկնի երթամ առաջ,  
Սասնոյ յերինք հանեն հառաջ .  
Հառաջ հանեն և ներկուին,  
Իր կտրճի անունով քաջ :

Կտրճիս սիրտ , կտրճիս ձեռք ,  
 Ի՞նչ փոյթ քաջիդ հազար մէկ վերք ,  
 Մէկ հարուածին կուտաս հարիւր .

Ազուաւին լէջ կաննս հողեր :  
 Հայ աղբրտիք , եւն .

Թող այլք բնակին հովիտ ու դաշտ ,  
 Վատ անգուլթին հետ լինին հաշտ ,  
 Ես պիտ' մնամ միշտ աննուաճ ,  
 Թէեւ վրաս գայ քսան վաշտ :

Յորենի տեղ կուտեմ կորեկ ,  
 Երկաթ ձեծեմ գիշեր ցորեկ ,  
 Շինեմ փետատ , խոփ , խաչ երկաթ  
 Ծանր է դատուս բայց եմ ազատ :  
 Հայ աղբրտիք , եւն .

Այծեամի պէս կը ցատկըրտեմ ,  
 Առիւծի պէս կը մռնչեմ ,  
 Ծովու մը պէս կը փրփրիմ ,  
 Կայծակի պէս կը հարուածեմ :

Կուտոյ դաշտը բազդն է կեանքիդ ,  
 Հոն պիտ' ծագի արշարոյսը .  
 Կամ աւետիս տայ դրօշակիդ ,  
 Կամ պող տեսնէ քո երեսը :

Հայ աղբրտիք եւն . :

Պերձ ոռչոռ



Ե Ր Պ

Շ Ղ Թ Ա Յ Ա Կ Ա Պ Հ Ա Յ Ո Յ

Ի դ՛ւր են ի դ՛ւր , բռնաւոր :  
 Սպառնալիք քո ամենայն ,  
 Ո՛չ , քո շլթայք չեն զօրաւոր  
 Յընկճել զոգիս մեր Հայկական .  
 Ըզմարմին միայն զայս մարմին  
 Կտրես գերել՝ քեզ ի նախատ .  
 Սակայն ոգիք մեր երկնային ,  
 Սիրտք Հայկազանց են մի՛շտ ազա՛տ :  
 Ազա՛տ են , ազատ մեր լեզուք  
 Մաղթել զչանթս Սրգարուլթեան  
 Ի գլուխ ձեք , ո՛վ արիւնհարուք՝  
 Որ աւերէք ըզ՛այաստան :

Ի Դըժո՛խս անկցին թշնամիք ,  
 Անհետացին մինչ յաւիտեան .  
 Կեցցե՛ն Արքայ և Հայրենիք ,  
 Կեցցէ անմահ մերս Հայաստան :

Խ . վ . Քաղֆայեան ( Խ . Ե . Ն .



Ո Ղ Բ

Ա՛խ հայրենիք գանձս ու հոգիս  
 Քեզ նուիրեմ ընդունէ :  
 Թէ կարելի թող հս մեռնիմ ,  
 Վերականգնի ա՛խ Հայաստան :

Նպատակիս հասնիմ միայն ,  
Թող զիս հանեն կախաղան .  
Կախաղանէն ինդգուկ ձայնով ,  
Պիտի գոչեմ ա՛խ հայաստան :

Անոր սիրոյն բանան ալ դրուիմ ,  
Պայատ է ան ինձ համար .  
Չեռքերս ոտքերս չղթայ զարնեն ,  
Երջանկուծիւն է ինձ համար :

Ե՛րբ պիտի գայ իմ թագաւոր ,  
Որ ես հասնիմ իմ ուխտիս .  
Դրօշակներ ծածան ծածան ,  
Ականակուռ թագ գրլխին :

Մինչեւ իսկ որ աքսորուիմ ալ  
Թափառական ընէ իմ բաղդ .  
Հայրենիքիս սիրոյն համար ,  
Փշոտ վայրեր կըլլան դրախտ :

Ա՛խ հայաստան աչքդ դարձուր ,  
Քեզ փնտռող որբերուն .  
Պէս պէս ցաւօք կը տանջուին ,  
Դարման եղիր հայ քաջերուն :



## ԱՐԱՄ—ԵՐԳ

Մեր քաջ Հայոց զօրութեան  
Վեր կացէ՛ք , սասց Արամ .  
Առաջեաւ բացէ՛ք նշան ,  
Գնա՛նք Հայ լեզուն տարածենք .  
Ո՛հ Արամ , Արամ , Արամ :

Նիւքար զըստրուկն Ասորին  
Բարբառ կոչէ առաջին .  
Գլուխն յաշտարակ մրխեցէ՛ք ,  
Որ յերկնից սորվի Հայերէն :  
Ո՛հ Արամ , եւն :

Յորդան տո՛ւք , օ՛ն , զօրք յորդան  
Դէպ ՚ի կողմն Արեւմտեան ,  
Պայապիս Քաղեայ Տիտան՝  
Դի՛ք զի տապաստ ՚ի դամբան .  
Ո՛հ Արամ , եւն :

Յորդան տո՛ւք , օ՛ն , զօրք յորդան  
Տեաքք յայնալիճ աղեղան ,  
Քընքուչախօս ամբոխին  
Տալ զլեզու հայկական :  
Ո՛հ Արամ , եւն :

Ո՛վ չը գիտէ Հայերէն՝  
Ո՛չ ճանաչէ նա զՈՐ Է՛ն ,  
Որ բանիւ Հայոց արար  
Այս մեծ աշխարհ մեկ համար :  
Ո՛հ Արամ , եւն :

Ի ծովէ մինչեւ ՚ի ծով  
Թո՛ղ խօսի՛ն Հայ բառերով  
Ներհակողին նիզակով  
Ցուցէ՛ք , օ՛հ , սասց Արամ  
Ո՛հ Արամ եւն .



## ԵՐԳ ՄԱՐՏԻ

Քաղցր հայրենեաց ազատութեանը համար ,  
Եւ լուսասփիւռ սուրբ հաւատոյս վեհափառ ,

Այս երկու վեհ սուրբիս ահա  
 Թէ ինձ մեռնիլ արժան չըլլայ,  
 Կեանքն ինձ ալ ինչ կը ծառայէ  
 Երբ գերութիւնն այսպէս տեւէ :

Ո՛վ սուսերդ իմ վաղակուոր սայրասուր,  
 Եւ հրացանդ որ կը ժայթքես բոց և հուր,  
 Գուք թշնամին խորտակեցէ՛ք  
 Եւ գրանաւորն նուաճեցէ՛ք  
 Կեցջի՛ք միշտ իմ հրացան սուսեր,  
 Զեօք Հայրենեացս կանգնին աւեր :

Ո՛վ սուսերդ իմ երբ տեսնեմ քեզ շողջողաս,  
 Եւ դու հրացանդ իմ սեւագէժ՝ որոտաս,  
 Վատ թշնամուոյն իրանն փրճուի,  
 «Աւա՛ղ» կոնչէ՛ ը՛րայնպէս մեռնի,  
 Ապրին միշտ մեր հէք Հայրենիք,  
 Կեցցեն միշտ մեր վեհ Հայրենիք :

(Թարգմ. ի Յուն.) Մ. Յ. Տաւադեան



### Ի՛ ՔԱՉՆ ՎԱՐՂԱՆ

Իմ հայրենեաց արեւ վարդան  
 Հոգիս հոգւոյդ եղնի զուրպան,  
 Որ Տղմուտի տփերին քով  
 Վաթսուն հազար կորիճներով  
 Զարկիր, զարկուար, ինկար քաջ քաջ  
 Պարսիկ սփռած ի ձախդ ու յաջ,  
 Իմ հայրենեաց արեւ վարդան  
 Հոգիս հոգւոյդ եւն :

Աւետարան ու խաչն առեր  
 Տարիւր յեգկինս բարձրացուցեր,  
 Եւ դու ալ յնա թողեր գացեր  
 Անուշ արեւդ հողըն տուեր,  
 Որ Հայրենեաց վարդեր բացուին :  
 Երգէ պլպուլ դրախտի սարին :

Իմ հայրենեաց արեւ վարդան  
 Հոգիս հոգւոյդ եւն :

Արիւնդ կարմիր կարմիր թափուաւ,  
 Դաշտն ու պարտէզ ներկուեցաւ,  
 Լուսնակն եկաւ ամպի տակից  
 Պազ պազ թափեց ցօղիկն աչից,  
 Որ հայրենեաց վարդեր բացուին,  
 Երգէ պլպուլ դրախտի սարին :

Իմ հայրենեաց արեւ վարդան  
 Հոգիս հոգւոյդ եղնի զուրպան :

Սիւնն Հ. Մ. Ֆելիկեան



### Ի՛ ՍԳԱԼԻ ՄԱ՛Ք ԶԻՔՈՒՆՅԻ ՊԱՏԱՆԻՈՅ

Դու զ՞՛վ խնդրես մայր իմ անուշ,  
 Եկ՛, մի՛ դողար, մօտեցիր հոս :  
 Անկաց աչօք դիտէ զորդիդ,  
 Ո՛ւ իւր վերքերն արիւնահոս :

Թրքաց մայրեր թող լան, ու դուն  
 Ուրախ լուրեր տար ՚ի Զէյթուն :

ինչպէս երբեմն օրրանիս մէջ  
կապուղ ձեռամբ փայփայելով,  
Մանկիկ մարմնոյս հանգիստ տայիք,  
Իրբեւ հրեշտակ նուագելով.

Ձիս հանգչեցուր ի հող, ու դուն  
Ուրախ լուրեր տար ի Զէյթուն:

«Նորեկ որդւոր կենացն արեւ  
Չեզի համար փայլի Հայեր»  
Այսպէս յայնժամ դու երգէիր  
Օրօրոցիս նստնալ քովեր:

Անոնց համար շիջաւ, ու դուն  
Ուրախ լուրեր տար ի Զէյթուն:

Կարմիր կալրակք ցոյտեն վերքէս,  
Ստեղծան մայր իմ նայէ չորս դիս,  
Զարինըռուչա թուրքերն տե՛ս,  
Հապարներով փռուած գետին:

Կերաւ զանոնք սուր մեր, ու դուն  
Ուրախ լուրեր տար ի Զէյթուն:

ինչպէս վիշապ մընչելով,  
Ու մեր վրայ յարձակեցան,  
Յնցեց Զէյթուն՝ գլուխն ժայռոտ,  
Իւր վհից մէջ թօթափեցան:

Կարմիր ներկան ձորձք մեր, ու դուն  
Ուրախ լուրեր տար ի Զէյթուն:

յու ծափ զարկին մեր հարց ըստուերք,  
Թէ չէ մեռած Հայրցս կրակ,  
Ու ց' ծացին այնչափ գոհեր,  
Ձի լուծաւ գրէթ յարեան փտակ:

Խնդաց Մասիս, մայր իմ և դուն  
Ուրախ լուրեր տար ի Զէյթուն:

վերջին համբոյր տամ քեզ մայրիկ,  
Հատուցանես զայն սիրուհւոյս,  
վերջին անգամ գրկեմ մեր հող,  
Ոյր արդ իջեմ՝ ի ծոցն անլուս,

Խաչ մի տնկէ վրաս, ու դուն  
Ուրախ լուրեր տար ի Զէյթուն:

Մ. Պէշկիրաւլեան



## ԻՂՁ ՊԱՆԴԻՍԻՆ

Թողէ՛ք զիս անէծք, ոճիրք մշտատեւ,  
վճիռք անողք բազդին անարեւ,  
Թողէ՛ք, որ փչրեմ շղթայն իմ ոտից,  
Յոր դարք Աստուածուց հեծին վշտալից:

Ձի զիս մայրական կարօտ տանջէ յար,  
Թողէ՛ք, որ երթամ, հասնիմ յԱւարայր:

Թողէ՛ք զիս օտար ափունք միանգամ,  
Թողէ՛ք, որ սար ձոր տնցնիմ, ու գնամ,  
վազեմ թեւարաց, դեռ աչքերս ՚ի յոյս,  
Տեսնեմ ամպամած արեւն իմ հոգւոյս:

Ձի զիս մայրական կարօտ տանջէ յար,  
Թողէ՛ք, որ երթամ մտնեմ յԱւարայր:

Թողէ՛ք զիս անգութ սաստղեր ու յուսին,  
Ծաղիկ՝ ու զեփեռ արցունք պանդխտին,  
Թողէ՛ք, որ ծածկիմ նոճեաց չուքին տակ,  
Ուր վարդան հանգչի, ու փառաց պտակ:

Ձի զիս մայրական կարօտ տանջէ յար,  
Թողէ՛ք, որ երթամ, նստիմ յԱւարայր:

Թողէ՛ք, որ գրիչս առնեմ, ու քնար,  
Սիրտըս՝ ու հոգիս լարեմ վշտահար,  
Երգեմ, ո՛հ երգեմ հառաչանս ու սէր  
յԱշխարհն Աստուծոյ, յերկիրս իմ աւեր.

Ձի զիս մայրական կարօտ տանջէ յար,  
Թողէ՛ք, որ երթամ, ու լամ յԱւարայր:

Թողէ՛ք մէն մ'աչերս շուրջ ածեմ կարօտ,  
Տեսնեմ Եգեժիս կենացն առաւօտ,  
Տամ անդ սիրահար շնչիկըս յետին,  
Ձոր Հայուն բաժաչ դրած է երկին.

Բա՛ւ զիս մայրական կարօտ տանջէ յար,  
Թողէ՛ք. այլ թողէ՛ք, մեռնիմ յԱւարայր:

Սիսուն Հ. Մ. Ֆէշկեան



ԱՐԱՔՍԻ ԱՐՏԱՍՈՒՌԱԸ

Մայր—Արաքսի ափերով  
Քայլածուր գնում եմ,  
Հին հին դարուց յիշտակ  
Ալեաց մէջը պըտրում եմ:

Բայց նոքա միշտ յեղյեղուկ,  
Պրզտոր չրով եզերքին  
Դարիւ գարիւ խըփելով  
Փախչում էին լուազին:

—Արա՛քս, ինչո՞ւ ձըկանց հետ  
Պար չես բռնում մանկական  
Դու դեռ ծովը չը հասած,  
Սըգաւոր ես ինձ նըման:

Ինչո՞ւ արցունք ցայտոււմեն  
Քու սէգ, հպարտ աչերից,  
Ինչո՞ւ արագ փախչում ես  
Այդ հարազատ ափերից:

Մե՛կ պըզտորի յատակըդ,  
Հանդարտ հոսէ՛ խայտալով,  
Մանկութիւնը քու կարճ է.  
Շուտ կը հասնիս դէպ ի ծով:

Վարդի թըփեր թո՛ղ բուսնին  
Քու հիւրընկալ ափի մօտ,  
Սոխակները նոցա մէջ  
Երգեն մինչեւ առաւօտ:

Մըշտադալար ուռիներ  
Սառ ծոցի մէջ քու ջրերին,  
Ճըկուն ոտքն ու տերեւ  
Թող թաց անեն տապ օրին.

Ափերիդ մօտ երգելու,  
Հովիւք թո՛ղ գան համարձակ,  
Գառն ու ուլը քու վճիռ  
Ձուրը մտնեն միշտ արձակ: —

Մէջըը ուռցուց Արաքսը,  
Փրփուր հանեց իր տակից,  
Ամպի նման գոռալով  
Էսպէս խօսեց յատակից:

1001  
1001  
1858



«Յոտակըս պարզ ու վճիտ  
կոհակներըս ոլորուն  
Լուսաբերը մինչեւ այգ  
Ջրբիս մէջինժէր լրղում :

«Ենչըս մնաց այն օրից ,  
Ո՞ր ջրամօտ զեղերըս ,  
Ո՞րը ի՛վ շէն՝ քաղաքից ,  
Ո՞ր՝ բերկրալի տեղերըս :

Տուրքը ջրբի ամեն օր  
Իմ սուրբ ծոցէն Արարատ ,  
Մայրախընամ ինձ սընունդ  
Պարգեւում է լիսոտա :

«Բայց ես այն սուրբ ջրերով ,  
Սուրբ Յակոբայ աղբիւրին ,  
Պիտի ցօղեմ արտօրա՞յք  
Իմ ատելի օտարին :

«Կամ կենսատու իմ ջրով  
Ափերից մօտ կըկըլտ՝  
Իր ձեռնե՞րը լուանայ  
Գողն՝ աւաղակը հօտած :

«Մինչ իմ օրդիք (ո՞վ գիտէ)  
Ծարու , նօթի , անտէրունջ ,  
Օտար աշխարհ յածում են  
Թոյլ օտքերով կիսաշունջ . . .

«Հեռո՛ւ հեռո՛ւ քչեցին  
Բընիկ ազգը իմ Հայկեան ,  
Նորա տեղն ինձ տօ ին  
Այգ խըստասիրտ , մօլեկան :

«Գոցա համա՞ր զարգարեմ  
Իմ հիւրընկալ ափերը ,  
Եւ կամ դոցա՞ հրապուրեմ  
Ճըպոտ , պըլլած աչերը :

«Քանի որ իմ գաւակունք  
Էօպէս կու մնան պանդուխտ՝  
Ինձ միշտ սըգւոր կը տեսնէք :  
Այս է անխօսք իմ սուրբ ուխտ :»

Էլ չը խօսեց Արաքսը ,  
Յորձանք տուեց ահագին ,  
Օղակ օղակ օձու պէս  
Առաջ սողաց մօլեգին :

Ռ. Յ. Գ. Պատկանեսուհի



ԵՐԳ ՊԱՆԴՈՒԽՍ ՊԱՏԱՆԵԿԻ

Ծիծեռնակ , ծիծեռնակ ,  
Դու գարնան սիրուն թռչնակ ,  
Դէպ 'ի ո՞ւր ինձ աստ ,  
Թըռչում ես այդպէս արագ :

Այս , թըռի՛ր , ծիծեռնակ ,  
Ծընած տեղըս Աշտարակ .  
Անգ շինիր քօ բոյնը՝  
Հայրենի կըտուրի տակ :

Անգ հեռու՛ ալեւոր  
Հայր ունիմ սըգաւոր ,

Որ միակ իր որդուն  
Սպասում է օրէ օր :

Երբ աննես դու նորա՝  
ինձնից շատ բարեւ արա՛ .  
Ասա՛ , թող նստի լայ  
իր անբաղդ որդու վերայ :

Դու պատմէ՛ , թէ ինչպէս  
Աստ անտէր ու խնդճ եմ ես ,  
Միշտ լալով , ողբալով  
կեանքս մաշուել , եղել է կէս :

Ինձ համար ցերեկը  
Մու՛թ է շրջում արեգը ,  
Գիշերը թաց աչքիս՝  
Քունը մօտ չէ գալիս :

Ասի՛ր , որ չի բացուած  
Թառամեցայ միացած ,  
Էս ծաղիկ գեղեցիկ՝  
Հայրենի հողից զրկուած :

Դէ՛հ , սիրուն ծիծեռնակ ,  
Հեռացի՛ր , թըռի՛ր արագ ,  
Դէպ՛ Հայոց երկիրը ,  
Ծընած տեղըս - Աշտարակ :

Գ. Ա. Դողդիսեանց

## Հ Ա Յ Ր Ե Ն Ի Ք

Իմ Հայրենիք զիս կը կանչէ  
Հեռու եմ Հայաստանէն .

Հայու որդւոյն կը վայելէ՞  
Հեռանալ Հայաստանէն :

Մի՛թէ արծաթ , ոսկի , գոհար  
կը սփոփէ Հայաստանը ,  
Ան որ կ'ողբայ որդւոց համար՝  
Խըղճալի Հայաստանը :

Խոր տխրութեան մէջ է թաղուեր  
Թագուհի Հայաստանը ,  
Բուպիկ ոտքով , արձակ մազով  
կ'արտասուէ Հայաստանը :

Անգութ երկինք ալ չը յիշեր ,  
Մոռցեր է Հայաստանը ,  
Մնասիրտ Հայերն ալ չեն յիշեր  
Անուշիկ Հայաստանը ,

Ո՛հ , թողէ՛ք զիս խօսիմ ազատ ,  
Երգեմ միշտ Հայաստանը ,  
Անուշ հրկիր , կօյս անարատ ,  
Անըման Հայաստանը :

Արեւ ծածկեր է իր դէմքը  
Խաւար է Հայաստանը ,  
Հայոց արեւն ալ մարեր է ,  
Սեւ հագեր Հայաստանը :

Թշուառ սրտիս ձայն կը կտրէ ,  
Ողբալով Հայաստանը ,  
Ո՛հ , չի կայ Հայ որ ըսփոփէ  
Նուաղեալ Հայաստանը :

Մինչեւ կրտորի իմ վերջին շունչս,  
Պիտի կանչեմ Հայաստան  
Պըլլուիմ մէյ մ'իմ Հայրենեացս  
Հապա մըտնեմ գերեզման :

Անգորբութիւն ես կը խնդրեմ  
Սիրելի Հայաստանին,  
Կըտրել այս ձայնս չէ չէ կարող  
Սոսկումըն գորեզմանին :

Ա. Հայկունի

### Գ Ա Ր Ո Ւ Ն

Ո՛հ ի՛նչ անուշ և ինչպէս գով  
Առաւօտուց փըչես հովիկ,  
Ծագկանց վրայ գուրգուրալով  
Եւ մաղբերուն կուսին փոփկիկ .  
Բայց չես հովիկ իմ Հայրենեաց,  
Գընա՛, անցի՛ր սրբաէս ՚ի բաց :

Ո՛հ, ինչ ազու և սրտագին  
Ծառուց մէջէն երգես թըռչնիկ,  
Սիրոյ ժամերն ի յանտառին  
Զմայլեցան ՚ի քո ձայնիկ .  
Բայց չես թռչնիկ իմ Հայրենեաց,  
Գընա՛, երպէ՛ սրբաէս ՚ի բաց :

Ո՛հ, ինչ մրմունջ հանես, վտակ  
Ականակիտ և հանդարտիկ,  
Քու հայելույդ մէջ անապակ  
Նային զիրենք վարպն ու աղջիկ .  
Բայց չես վտակ իմ Հայրենեաց,  
Գընա՛, հոսէ՛ սրբաէս ՚ի բաց :

Թէպէտ թռչնիկն ու հովս հայոց  
Աւերակաց շըրջին վերայ,  
Թէպէտ պղտոր վտակն հայոց՝  
Նոճինեբու մէջ կը սողայ,  
Նոքա հառա՛չք են Հայրենեաց,  
Նոքա չերթա՛ սրբաէս ՚ի բաց :

Մ Պէշիկրաշեան

### Ա Ր Տ Ա Ս Ո Ւ Ք Հ Ա Յ Ա Ս Տ Ա Ն Ի

Քանի տարի է Հայրենիք սիրուն  
Դառն ցաւերով եղեալ եմ նկուն  
Սար ու ձոր ինկամ իբր խեղճ թռչուն  
Վեր առ զքնարդ ով քաջ գիւցազուն .

Ողբամ Հայաստան, ամսո՛ս Հայաստան  
Սա՛ղ Հայաստան, քաղցր իմ Հայրենիք :

Հայաստանի մէջ դանազան տղեր  
Իր խեղճ որդիքը պանդուխտ ու անտէր  
Քաղաքք ու օւանք անքնակ աւեր,  
Աւերակ անչէն են Հայոց տներ,  
Ողբամ Հայաստան եւն .

Մթնցաւ Հայու պայծառ լուսատուն .  
Խեթիւ հայեցաւ ակն գերագոյն,  
Միշտ այլպէս ձմեռ ե՛րբ հապա գարուն,  
Աւի նստինք յանք մուսայդ Հայկազուն .  
Ողբամ Հայաստան եւն .

Ինչո՛ւ դու այդպէս ով վերին տնտես,  
Հայու խեղճ ազգը արարեր անտես .

Ե՛րբ արդեօք դու մեզ լոյս պիտի ծագես,  
Եւ բարի իշխան մեզ պիտի կարգես,  
Ողբամ Հայաստան եւն .



## ՏԵՍՈՒ ԼԱՅԱՍՏԱՆԻ

Թէ իմ Հայրենեաց քնար սրգաւոր  
Հեծէ տխրագին՝ իմ հոգիս է այն .  
Թէ նորա բեկբեկ թերեր վշտաւոր  
Խօսի ողբաձայն՝ իմ սրտիկս է այն .

Թէ հայ մուսային սրտառուչ նուագ  
Դեռ կ'եղերերգէ՝ հառաչանքս է այն  
Թէ Հայաստանիս սև բաղբին հագագ  
Լայ ազեկաւոր՝ հեծեմանքս է այն .

Թէ իմս Հայրենեաց կիսամեռիկ շունչ  
Դեռ լսի տխուր՝ իմ ողբերս է այն .  
Թէ լըռիկ մընջիկ հեծէ անշըշունջ,  
Ո՛հ, անկարեկիր իմ լալիքս է այն .

Եւ Հայկայ փառաց յօժար ողբերգուն  
Հարազատ լայողն՝ իմ ձայնիկս է այն,  
Չորս հազար տարուան պարծանոց դարուն  
Արձագանք տուողն՝ աղաղակս է այն .

Եւ Հայաստանիս ցաւերուն հատոր  
Ահա այս մաշած իմ կուրծքըս է այն .  
Ոեւ սեւ թերթերուն էջ սրտակտոր  
Արտասուօք գրուած՝ իմ ազիքս է այն .

Թէ բանաս կարգաս արիւնոտ դաշտեր  
Վարդագոյն ներկուած՝ իմ կողերս է այն

Թ՛աչքէ անցընես շամփրած նիպակներ  
մահահոտ ցրցուած՝ իմ թիկունքս է այն .

Թէ Հայկ ե Արամ, Վարդան վահաններ  
ինկած տեսանես՝ իմ ոյժըս է այն .  
Թէ զէնք, թէ զբահ, թէ սուր, թէ սուսեր  
Փշրած կտորած՝ ռսկորներս է այն .

Թէ արեամբ ներկեն ակունք Եղեմին  
Նըշխար քաջերուն՝ իմ բիբերս է այն,  
Թէ բաղցր ու անբիծ ալիք Եփրատին  
Լեղի են գարձեր՝ արտասուքս է այն .

Թէ վըճեա գետերն աղբերքն արծաթի  
Լալիք առուակեն՝ եռակներս է այն .  
Թէ Տիգրիս, Գեհոն, Փիտոն մըռընչեն  
Թէ պըղտոր գնան՝ իմ արիւնս է այն .

Թէ սառնամանիք ձըմբան բըքարեր  
Լեռներն է պատեր՝ իմ գագաթս է այն,  
Եւ քաղցրիկ զիփիւռն անուշակ հովեր  
Ցրրտագին փըչեն՝ իմ շնչիկս է այն .

Թէ վըտակ վըտակ ցօղէ զյիշատակ  
Չայս տըրտմափաստակ՝ աչքերս է այն,  
Թէ սըրտաձայնիկ երգէ զՀայաստան  
Կանչէ զՀայաստան՝ անկեղց սէրս է այն .

Թէ մըթին խորչերն ու ձորեր լըռին  
Սեւերով ծածկեն, մենաստանս է այն .  
Թէ ողբ կը կարգան վալրերնց զեմին  
Ճընչած լերդերուս արձագանքս է այն .

Եւ Հայաստանիս հողերը ուխտի՛  
 Պինդ սիրով գըրկողն՝ իմ ձեռքերս է այն :  
 Թէ կը համբուրեն կաթսօզին սրբաի՛ւ՛  
 Ո՛հ, մայրակարօտ շրթունքներս է այն :

Եւ Հայոց լեռանց ցորտ շուքերուն տակ  
 Ընկած տարաբազդ իմ ճակատս է այն .  
 Մասեաց սուրբ քարերն իր բարձն ու պսակ  
 Դրած սըգատոր՝ գլուխիկս է այն :

Թէ կիսակրթածն տաճարն Հայրենի  
 Սեւ սուգ է պատեր, տաղաւարս է այն :  
 Ուր շիջելովառ կանթեղ դեռ հի. ծէ  
 Նուսդ առ նուազ՝ իմ յոյսըս է այն :

Ուր ախուր նըստեր մազերն են ծածկեր  
 իւր սեւուկ աչքեր՝ սիրականս է այն .  
 Չեռքերն 'իճակատ' կըռնակն ի հողեր  
 Յուսով կըռթըներ՝ Հայաստանս է այն  
 — Գերեզմանս է այն :

Ուր երբ տեսանեմ զիմ հէքն Հայաստան  
 Ի գահ իւր փառաց՝ իմ բաղձանքս է այն .  
 Յայնժամ թող մեռնիմ իւր ծոց մայրական  
 Զ իմ վերջին շքնչոյս միակ ուխտն է այն :

Ս. Հ. Ֆէյէկեաւսի



Հ Ի Ա Ն Է Բ

Ազատութեան այն վառ սէրը  
 Թունդ որտաց իմ սրտումն  
 Իմ Հայրենեաց Սուրբ անունը  
 Ինձ պատերազմ է կանչում :

Ելէք ելէք հայկազունք  
 Ելէք Հայկայ զաւակունք  
 Ելէք ելէք հայ եղբայրներ,  
 Առէք ձեր սուր ու զէնքեր :

Ահա եղբարք, հայ եղբայրներ,  
 Առէք սրահ, սուր, զէնքեր,  
 Մահը դաշտում Շաւարշանայ,  
 Մեզ հրաւէր կը կարգայ :

Ելէք, ելէք հայկազունք,  
 Ելէք հայկայ զաւակունք .  
 Ելէք ելէք հայ եղբայրներ  
 Առէք սրահ, սուր, զէնքեր :

Ո՛հ Հայրենիք, սուրբ անունդ :  
 Անջինջ վառի իմ սրտում,  
 Մեր հայ եղբարց շիրիմները,  
 Իւրեանց գիրկն են մեզ կանչում :

Ելէք ելէք հայկազունք  
 Ելէք Հայկայ զաւակունք .  
 Ելէք ելէք հայ եղբայրներ :  
 Առէք ձեր սուր ու զէնքեր :

Այն օրերը մեր քաջ կեանքին  
 Նո իրական թող լինին :

Ով սիրում է ազատութիւն ,  
Թող չի մոռնայ հայ անուն :

Ելէք ելէք հայկազունք ,  
Ելէք հայկայ զաւակունք  
Ելէք ելէք հայ եղբայրներ ,  
Առէք ձեր սուր ու զէնքեր :

### ԵՐԳ ՌԱՄԿԱԿԱՆ

Ահա մայրիկ , ահա կերթամ  
Ազգիս համար մեռնելու .  
Քաջ ընկերներոյ միասին  
Անգուժ թուրքը ջարդելու :

Գերեզմանիս քարին վրայ  
Թափէ արցունք հայր եւ մայր .  
Թափէ արցունք , ցանէ ծաղիկ ,  
Գեռ պղտիկ եմ ես , մայրիկ :

Գերեզմանիս հողին վրայ ,  
Թեթեւ քարեր դիզեցէք .  
Ասկից վերջը խեղճ աղքատներ ,  
Չսուակներնիդ սիրեցէք :


Ես երբ Սեփաստիա կերթայի  
Երկու օրէն կուգայի .  
Երկու օրը կ'ըլլար տարի  
Ես բեզ կը կարօտնայի :

Ելնէի լեռանը վրայ  
Քար մը դարնէի գլխուս :

Իմ գլխուս եկած ձիւնն ալ  
Մասեաց գագաթնն ալ չկայ :

Պարտէզիս մէջ երկու ծառ կայ ,  
Տեսնողին զարմանք կուտայ ,  
Հայ քաջերուն արիւնովը  
Կարծես ներկած ճիւղեր կայ :

Արգեօք այս մեր քաջածները  
Պիտի լսես ո՛վ Աստուած ,  
Թէ ողջ ողջ պիտի տեսնենք մենք  
հայու գրօշակը պարզած :



### ԵՐԳ

Հերիք որդեակ սքքան տարուան տառապանք,  
Հերիք դաժան անգուժ թրրքին ոտն ինկանք,  
Քանի խոնարհ գլուխ դրինք դայլերին,  
Այնքան ծանր բռներ դրին մեր վզին :

Հերիք ելնենք ցոյց տանք թէ մենք հարազատ,  
Հայ քաջերի արիւնից , ենք ազատ,  
Թէեւ չունինք ո՛չ սուր , ոչ թուր , ոչ նիզակ  
Մեր բահերն ալ կանեն նրանց շան սատակ :

Ինչո՞վ են նրանք մեզ տիրելու արժանի,  
Նրանք մարդ չեն՝ այլ գազաններ վայրենի,  
Մերն է ձիրքը , մերն է ուսում ու հանճար,  
Մերն է հողը , մենք ենք նորա աէրն արդար :  
Հերիք ելնենք ցոյց տանք եւն . :

Նրանց են մեր կոյս ազջիկներ , հարսնունքներ,  
Նրանց են մեր ճակտի քրտանց արդիւնքը ,

Նրանց սուրբին կարծես ծայրն է մեր հողին,  
Նրանց գամբող մեզնէ շատ է թանկագին:  
Ուերիք, էրնենք ցոյց ասնք, եւն.

Մենք եղբայրներ ունինք հեռու տեղերում,  
Նոքա մեր վրայ լռիկ արցունք են թափում,  
Չեն խնայել թեւ ու թիկունք կը հասնին,  
Շուտով կուգան կը միանան Սուրբ Գործին:



### ԵՐԳ

Չայն տո՛ւր ոյ ծովակ, ինչո՞ւ լուռ ես  
Ողբակից լինել չկամիս գըժբազդիս,  
Շարժեցէք զեփիւօք, ալիքը վէտ վէտ,  
Խառնեցէք զարտասուս այս շրերի հետ:

Հայաստանի մէջ անցքերին վրկայ,  
Սկիզբից մինչեւ ուժի խնդրեմ ինձ ասա,  
Մի՛թէ միշտ այսպէս պիտ' մնայ հայաստան  
Փշալից անապատ երբեմն բուրաստան:

Արգիօք գալո՞ւ է մի օր ժամանակ,  
Մ'ասիսի գլխուն տեսնել մի դրօշակ,  
Եւ ամեն կողմից պանդուխտ աղգայինք  
Դիմեն գէպ' իւրեանց քաղցր հայրենիք:



### ԱՌԱՋԱԴՐՈՒԹԻՒՆ

Թէ իմ ալիւր հերքրս սեւնային  
Ոյժըս ինձ յետ գար, կտրիճ դառնայի  
Նըժոյգ ձի հեծած, պիտերս ոլորած,

Չիւքս թուր առած ես դաշտ կ'երթայի:  
Ես դաշտ կերթայի՛ դաշտ Աւարայրի,  
Ողբած, ցողած Հայոց արիւնով:  
Ազգ իմ սիրական, դու ազգ թորգսմեան,  
Քու կորցրած թագը քեզ յետ կուտայի:

Կ'ասէի հայոց օրիորդներին,  
Ծախեցէ՛ք հագի ձեր թանկ շորերը:  
Թողէ՛ք պաճուճանք, զարդ մարգարիտներ,  
Ժանգոտած ու բուժ են մեր թրերը:  
Տուէ՛ք բեհեզեալ մեզ ձեր շապիկը,  
Որ մենք փարօթեմք մեր մարմնու վէրքը:  
Վիրակապ հիւսէ՛ք դուք ձեր մայերից,  
Էօպէս յայտնեցէ՛ք դուք մեզ ձեր սէրը:

Թէ ես լինէի հարուստ, մեծատուն,  
Սընտուկներս լի սեկսով, արծաթով,  
Շատերու նըման ես չէի լինիլ  
Երբէք ազգասէր ունայն խօսքերով:  
Շամբանեա, գինու, փառք ու պատուի տեղ  
Կ'աննէի առատ զնդակ ու վառօդ,  
Արձակ համարձակ կ'երթայի հանդէպ  
Հայաստանեայց ազգաց՝ անթիւ զօրքերով:

Թէ ես լինէի մի երկրի իշխան,  
Կ'ուտայի զօրքիս սաստիկ հրաման,  
Շուտաքայլ երթալ գէպ' ՚ի հայաստան,  
Խըղճուկ հայ ազգին լինել օգնական:  
Եւրոպ', Ասիա արեան գետերը  
Կր վազցնէի հեղեղի նըման:  
Մ'ինչեւ որ թագ, գահ ու ազատ կրօն՝  
Ինձնից չըստանար թշուառ հայս ստան:

Բայց նթէ մի օր, մի ժամ, մի բոպէ  
Աստուած լինէի մեր հողսգընդին:

Ի՛նչ սուր սըլաքնեի պիտի շող տայի  
 Մեր արիւնարբու թըշնամեաց գընդին .  
 Նենց թաւքը . քուրթ մօլի, պարսիկ սխերիմ  
 Դարաւոր սասիս դու յոյն կրօնամուլ,  
 Գիտօցէ՛ք որ իմ նրկսայրի սրից՝  
 Անճնաս չէր պըրծնիլ ո՛չ մի ձեր որդին .

Գաւնստ - Քարիպա



### ՍՈՒԳ ՄՕՐԻ, ՀԱՅԱՍՏԱՆԻ

Իմ սիրելի զաւակներքս  
 կը թափառին օտար աշխարհ  
 Ես ո՛ւր դիմեմ, ս՛ւր փընտըռեմ,  
 կը ծառային այսոց խոնարհ .

Եկա՛յք, որդեակք իմ,  
 Չեր մօրն այցելութեան .

Դարեր անցաւ լուր մը չառի,  
 Իմ քաջերս մեռան կորան,  
 Կուլամ արիւնըս կը սառի . . . .

Մէկը չունիմ տայ ինձ դարման .

Եկայք որդեակք իմ, եւն .

Արիւնս ցամքած, սիրտըս մաշած,  
 Դէմքս է տխուր մինչ յաւիտեան .  
 Ես կարօտոյն իմ որդեակաց,  
 Պիտի իջնեմ սեւ գերեզման .

Եկայք որդեակք իմ, եւն .

Եւ դու հովիւ թափառական,  
 Կ'երգես տըխուր ի մէջ հովտաց .

Ե՛կ արտաւուենք թագ կորստեան,  
 Տըխուր մահուան մեր որդեակաց .  
 Եկա՛յք որդեակք իմ, եւն .

Իսկ դու կըռունկ իմ հայրենեաց  
 Գնա՛ հեռու աչքէս ի բաց . . . .  
 Յետին ողջոյնս տո՛ւր զաւակացս,  
 Չի կեանքիս մէջ յոյսս է մեռած .  
 Եկա՛յք որդեակք իմ, եւն .



### ԱԶԱՏՈՒԹԻՒՆ

Ազատ Աստուած այն օրից  
 Երբ հաճեցաւ չունչ փչել,  
 Իմ հողանիւթ շինուածքին  
 Կենդանութիւն պարգեւել .  
 Ես անբարձառ մի մանուկ՝  
 Երկու ձեռքըս պարզեցի,  
 Եւ իմ անզօր թեւերով  
 Սղատութիւն զրկեցի .

Մինչ գիշերը անհանգիստ՝  
 Օրօրօցում կապկապած,  
 Լալիս էի անդադար,  
 Մօրըս քունը խանգարած,  
 Խնդրում էի նրանից՝  
 Բազուկներըս արձակել .  
 Ես այն օրից ուխտեցի՝

Ազատութիւնը սիրել ,  
 Թոթով լեզուիս մինչ կապերն  
 Արձակուեցան , քակուեցան ,  
 Մինչ ծնողքըս իմ ձայնից  
 Խնդացին ու բերկրացան ,  
 Նախկին խօսքն որ ասացի ,  
 Չէր հայր կամ մայր , կամ այլ ինչ ,  
 «Ազատութիւն» դուրս թըռաւ  
 Իմ մանկական բերանից :

«Ազատութիւն , իդձ կրկնեց ,  
 Ճակատագիրը վերելից ,  
 Ազատութեան դու զինւոր  
 Կամիս գըրվիլ այս օրից :  
 Ո՛հ , փշոտ է ճանապարհդ ,  
 Քեզ շատ փորձանք կըսպասէ .  
 Ազատութիւն սիրողին ,  
 Այս աշխարհը խիստ նեղ է» :

— Ազատութիւն , — գոչեցի —  
 Թո՛ղ որտայ իմ գըլխին  
 Փայլակ , կայծակ , հուր , երկաթ ,  
 Թո՛ղ զաւ դնէ թըշնամին .  
 Ես մինչ 'ի մահ , կախաղան :  
 Մինչեւ անարգ մահու սիւն ,  
 Պիտի գուռով , պիտ կրկնեմ  
 Անդադար՝ Ազատութիւն :

Կոնս Լանսլոուէ  
 Մ. Նալլաւեղեան

## ՀԱՅԵՐԱՆՈՒՍ ԹԱՒՔԸ

Դուն խելօք , հաշուով վաճառական ես ,  
 Միւլք , փող ու ապրանք , կասեն , շատ ունեւ  
 Բայց թէ փողէդ շահ չունի Հայաստան ,  
 Թըքել ենք քու ալ՝ փողիդ ալ վըրան :

Քաջ ոս՝ լսել եմ , ինքնրդ մեծաւոր ,  
 Անուն յաղթողի ունիս փուռաւոր ,  
 Բայց թէ թըրէդ շահ չունի Հայաստան ,  
 Թըքել ենք քու ալ թըրիդ ալ վըրան :

Ի վերուստ քանքար քեզի ալուած է ,  
 Հեղինակ անունդ աշխարհ փըռուած է .  
 Բայց թէ գըրչէդ շահ չունի Հայաստան ,  
 Թըքել ենք քու ալ՝ գըրչիդ ալ վըրան :

Հեռատես մըտքով դուն զարգարեցա՛ր ,  
 Հըզօր իշխանի սիրելին դարձար ,  
 Բայց թէ մըտքէդ շահ չունի Հայաստան ,  
 Թըքել ենք քու ալ՝ մըտքիդ ալ վըրան :

Բանուկ ու ճարտար դուն ունիս ձեռքեր ,  
 Շատ կը յօրինես թանկագին բաներ ,  
 Բայց թէ ձեռքէդ շահ չունի Հայաստան ,  
 Թըքել ենք քու ալ՝ ձեռքիդ ալ վըրան :

Երկինք շնորհեցին քեզ լեզու ճարտար ,  
 Քարոզչի ստացար հըռչակ ու հանճար ,  
 Բայց թէ լեզուէդ շահ չունի Հայաստան ,  
 Թըքել ենք քու ալ՝ լեզուիդ ալ վըրան :

Մեծ ուսում առիր, եղար գիտնական,  
 Գովեստրդ լրցուած է մարդոց բերան,  
 Թէ ուսումէդ շահ չունի Հայաստան,  
 Թըքել ենք քու ալ՝ ուսմանդ ալ վրբան:  
 Բաւնառն-Բարխայա



### ԻՏԱԼԱՅԻ ԱՂԶԵԱՅ ԵՐԳ

«Մեր Հայրենիք թշուառ անտէր  
 Մեր թըշնամեաց ոտնակոխ  
 Իւր որդիքը արդ կանչուած է  
 Հանել իր վրէժ, քէն ու ոխ»

«Մեր Հայրենի շըղթանեցով  
 Այսքան տարի կապկապած,  
 Իւր քաջ որդւոց սուրբ արիւնով  
 Պիտի լինի ազատված»

«Ահա՛, եղբայր, քեզ մի դրօշ  
 Որ իմ ձեքով գործեցի,  
 Գիշերները ես քուն չեղայ,  
 Արտասուքով լուացի»

«Նայի՛ր նորան, Իրեք գունով  
 Նուիրական մեր նշան  
 Թո՛ղ փողփողի թըշնամոյն դէմ,  
 Թո՛ղ կործանվի սէգ հըսկան»

«Ի՛նչքան կին մարդ, մի թող էակ,

Պատերազմի գործերում  
 Կարէ օգնել իւր եղբօրը,  
 Զանց չարեցի քո սիրուն»

«Ահա՛ իմ գործ, ահա դրօշ,  
 Շուտ ձի հեծիր քաջի պէս,  
 Գընա փըրկել մեր Հայրենիք,  
 Պատերազմի վառ հանդէս»

«Ամենայն տեղ մահը մի է,  
 Մարդ մի անգամ պիտ' մեռնի  
 Բայց երանի՛, որ իր Ազգի  
 Ազատութեան կը զոհվի»

«Գնա՛, եղբայր, Աստուած քեզ յոյս  
 Ազգի սէրը քաջալեր,  
 Գընա՛, թէեւ չեմ կարող գալ,  
 Բայց իմ հոգին քեզ ընկեր»

Գընա՛ մեռիր դու քաջի պէս,  
 Թո՛ղ չտեսնէ թըշնամին  
 Քու թիկունքը, թող նա չ'ասէ  
 Թէ վատ է իտուացին»

Ասաց, տուեց Օրիորդը,  
 Իր եղբօրը մի դըրօշ,  
 Մետաքսից էր ազնիւ դործած,  
 Ուր երեք գոյն կար որոշ»

— Գուրի՛կ, կանչեց քաջ պատանին

Մընաս բարեաւ, սիրական,  
Այս գրօշակին պիտի նայի  
Ամբողջ բանակ իտալեան:

Նա սուրբ է ինձ երբ մըրրոտուած  
Արտասուքով ու կընքած,  
Դու յանձնեցիր ինձ յիշատակ,  
Հայրենիքի նուիրուած:

Թէ մեռանիմ, դու մի սրգար,  
Իծացի՛ր որ տարեցի  
Դէպի մահու արքայութիւն,  
Իմ հետ քանի թըշնամի:

Ասաց, վսպեց դէպ ի հանդէս  
Աւտորիացւոց յանդիման:  
Իւր արիւնով գըննի յուերթ  
Ազատութիւն իտալեան:

Սորս կէսը, կէսի կէսը,  
Գէթ երեւէր մեր ազգուս.  
Բայց մեր կանայք . . . ո՛ւր եղիշէ,  
Ո՛ւր մեր կանայք փափկասուն:

Ո՛հ . . . արտասուք ինձ խեղդում են,  
Այլ չեմ կարող բան խօսել:  
Զէ՛ . . . թշուառ չէ իտալիան,  
Եթէ կանայք այսպէս են:

(Թարգ յիտալ.) Կոմս Էմիլսևուշէյ  
(Մ. Նալբանդեան)

## ԵՐԳ

Հասաւ արդ ժամ փառաց օ՛ն եկէք Հայեր,  
Այլ ի՞նչ հարկ վարանման կազմենք բանակներ:  
Խրախոյս, սիրտ առէք եւ արիարար  
Զէնք առէք, քս՛ջ եղէք, մի՛ առնէք դադար:  
Դիմենք ի Շաւարշան պետն Խրիմեան,  
Համախմբեալ կազմենք բանակ հայկական:  
Վատ է այն անսիրտ Հայն որ իւր թշնամւոյն  
Երեսէն կը դողայ շունի հայ արիւն:  
Իսկ արի զինուորին լուսափայլ ճակատ,  
Մշտագալար դափնի բողբոլին պսակ:  
Ոտքերու տակ սփռենք վարդեր ու շուշան,  
Յիշատակն Հայոց երգեմք յաւիտեան:  
Ծածանի մեր գրօշ ի կարին Ոստան:  
Մայր քաղաք թող ըլլայ Հայոց պետութեան:  
Զրահներ հագուեղէ՛ք սիրոյ հաւատքին,  
Փառք ունինք մենք թէ հոս թէ մէջ երկնքին:

## ՈՒՐ ՀՍՅ՝ ԶԻՔ ՎԱՅ

Արկածք Հայոց ժամանակին բնդ անիւ  
Փշրին տակաւ մինչդեռ սիրոյ համբուրիւ,  
Ուխտեմք ՚ի սէր եղբօր՝ ըզկեանս դնել գրաւ,  
Օն անգըր ՚ի մէնջ այր ընկերին լարել դաւ:  
Սրացաւ ի մէնջ բազմն անհամբոյր  
Արդ նոր բաղդիս քաղցր է համբոյր:  
Եղբայր զեղբայր գըզուէ սիրով,

Ճոխն աղբասին մատչի գըթով .  
 Էանց գիշեր՝ արդ առաւօտ ,  
 Ի ցօղ ժըպտի Մասեաց արօտ .  
 Եւ վառ ի վառ շողշողելով՝  
 Լոյսն արեգին ծըփայ ի ծով :

Հա՛պա մանկունք ,

Վե՛հ քաջաղունք ,

Ի գլուխ պըսակ .

Ի յաղթանակ ,

Առեալ նուազս

Արագս արագս ,

Օ՛ն փութացուք ,

Օ՛ն երգեսցուք .

Սէր և գութ

Մեր պսակ ,

Առ մեր բաղդ

Հրաւիրակ ,

Ցընծասցեն

Որք լսեն

Թէ՛ « ուր Հայ ,

Չի՛ք անդ վայ » :

Ե. Մէլիքեան

### ԵՂԲԱՅՐ ԵՄՔ ՄԵՔ

Ի բիւր ձայնից բնութեան շրթէդ  
 Թէ՛ երգք թռչին սիրողարար ,  
 Մասունք կուսին ամենագեղ

Թէ՛ որ զարնեն փափուկ քընար ,  
 Չունին ձայն մի այնքան սիրուն  
 Քան զանձկալի եղբայր անուն :

Տո՛ւր ինձ քու ձեռքդ եղբայր եմք մեք

Որ մըրըրկաւ էինք զատուած ,

Բաղդին ամեն ոխ չարանենգ՝

Ի մի համբարյր ցըրուին ի բաց :

Ընդ աստեղօք ի՞նչ կայ սիրուն ,

Քան զանձկալի եղբայր անուն :

Երբ ալեւար Մայրն Հայաստան ,

Տեսնէ զորդիս իւր քովէքով .

Սըրտին խորունկ վէրքըն դաժան՝

Քաղցր արտասուաց բուժին ցօղով :

Ընդ աստեղօք ի՞նչ կայ սիրուն , եւն .

Մէկտեղ լացինք մենք ի հընում ,

Եկէ՛ք դարձեալ յօր անբաժան

Խառնենք զարտօսը և ըզխրնդում ,

Որ բազմաձնունդ ըլլոյ մեր ջան :

Ընդ աստեղօք ի՞նչ կայ սիրուն , եւն .

Մէկտեղ յոգնինք , մէկտեղ ցանենք ,

Մէկտեղ թափին մեր բըրտինքներ .

Ըզհունձ բարեաց յիրկինս հանենք ,

Որ կեանք առնուն Հայոց դաշտեր :

Ընդ աստեղօք ի՞նչ կայ սիրուն , եւն .

Մ. Պէլիկոբաշչեան

## ՉՕՆ ԱՌԻՍԻՄԵԱՆ ՀԱՅՐԻԿ

Հայրիկ հայրիկ քո հայրենիք  
 Վասպուրական մեր աշխարհ  
 Վարդի փոխան քեզ փուշ բերաւ,  
 Յաւերդ արաւ բիւր հազար:

Գարուն եկաւ սոխակներով  
 Վարդի թփեր սրոնեց,  
 Իսպառ փրչից մացառ գտաւ  
 Լալահառաչ ձայն հանեց:

Հայրիկն ասաց իմ հայրենեաց  
 Փուշն է անուշ քան ըզվարդ,  
 Ես այդ փշոց մէջէն դարձեալ  
 Կը սրոնեմ սիրուն վարդ:

Այն սայրասուր փշերն ամեն  
 Փունջ կապեցէք չար ի շար,  
 Թողէք զըլխիս հիւսեմ պսակ  
 Որում ճակատս է յօժար:

Որքան ստոր դաւեր չարեն  
 Սեւակսինչ ազաւաներ,  
 Չէ կարելի արժին իր բարձր  
 Թռիցն յերկիր վար բերել:

### ԽՈՍՏՈՒՄՆ

Մինչեւ մահուան անյիշատակ ի շիրիմ  
 Մնամ միշտ քո սիրոյդ հաւատարիմ:

Վրնայ ըլլալ աւա՛ղ որ դու մոռնաս դիս  
 Բայց ես հաստատ եմ միշտ իմ խոստումիս:

Ով իմ հրեշտակ յոյս իմ միակ նազելի,  
 Քեզի կեանք բազդ ու բոլորըն ալ տուի,  
 Իմ մա՛կութեան տիոց դու սէր նախընծայ  
 Սիրտըդ զերել միշտ ես փափաքեցայ:

Սակայն ամբոսս երջանկութիւն այս փափուկ,  
 Մահուան ծանր ձեռքով ըլլայ վաղանցուկ,  
 Այս է վճիռ զոր գրեց ճակտին մեր՝ երկինք:  
 Պէտք է իրարմէ անդարձ բաժնուինք:

Սակայն իմ սիրտս քուկին սրտէդ անբաժան  
 Քեզմէ չի զատուիր մինչ ՚ի գերեզման,  
 Սիրոյս յետին բազմանք՝ յետին նշանակ  
 Քու քովդ է հանգչիլ՝ մահուան քորին տակ:

Սոխակն երգել իւր դայլալիկ գիշերին  
 Նստի ՚ի վերայ մեր ջուրտ դամբանին,  
 Մինչ երկուքնիս մենք ՚ի տեղւոյն այն դադար  
 Մահոտան գրկաց մէջ կը ննջենք անդադար:

Նկայ ըլլան աստեղք երկնից կամարաց,  
 Չքեզ յաւէտ պիտի սիրեմ անմոռաց,  
 Չը պիտի դադորիմ երբէք ըսել քեզ  
 Ես քուկդ եմ յաւէրժ սիրով բացակէզ:

Ա՛խ, ի՞նչ անեմ ըսէ՛, սրտիս իմ հատոր  
 Արիւնս կ'ուզես. թո՛ղ վաղէ բուրբ:

Բայց թէ անով ալ դո՛հ չըլլաս , ո՛վ անգուժ ,  
իմ կեանքըս ալ դո՛հ կուտամ քու սիրոյդ :

Պիտի սիրես զիս յետ մահու գիտեմ ես ,  
Բայց անօգուտ տեղ արցունքներ թափես .  
Շիրմիս վրայ անմխիթար ողբալով  
Այն սիրելիդ զոր կորուսեր շուտով :

Մ. Պէշիկրաշեան

ԵՐԿ

Ահա ելաւ լուսին արծաթ  
Մուժ ամպերու ստուերէն ,  
Ահա նաւակն ալ գեղազարդ  
Դուրս սահեցաւ ժայռերէն ,  
    Անուշ հովիկ փչէ յուշիկ  
    Ու դէպ ինձ բեր բեր ծիր ալիք :

Դաւակին մէջ իմ գեղուհին  
Փռուած անփոյթ , լուսնի տակ ,  
Կը ձայնակցի իր կիթառին  
Հնչուն ձայնով մը յատակ .  
    Անուշ հովիկ փչէ յուշիկ ,  
    Ու դէպ ինձ բեր հրգն անուշիկ :

Չսընով կ'երգէ սէր ու զգուանք :  
Համակ յուզում ու սարսուռ ,  
Ա՛լ թո՛ղ աղջիկ երգն ու նուազ  
Բաց աչքերըդ ինձ դարձուր .

Անուշ հովիկ փչէ յուշիկ ,  
Ու դէպ ինձ բեր սէրն անուշիկ :

ԱՂԱՄԻ ԵՒ ԸՆԿԵՐՔ ԻՒՐ

Այն որ ծանօթ է պատմութեան ազգին ,  
Ճանաչէ վահան , Մուշեղ , Գարեգին .  
Նօքա գնացին , Տէր ետ մեզ կրկին ,  
Սէգ կարօն , Մուսէն և քաջն Աղասին :  
    Ապրին պաշտպանք մեր ազգին ,  
    Կարօն , Մուսէն , Աղասին ,  
    Կեցցին զիցազէք մեր ազգին ,  
    Կարօն , Մուսէն , Աղասին :

Միշտ պիտի պարծի քանաքիւտ տւան ,  
Որ ծընաւ ձեզ պէս կորին աննըման .  
Դուք Արարատայ աւուր ախոյեան ,  
Փառք և ցընծութիւն Աօքանազեան տան :  
    Ապրին պաշտպանք մեր Ազգին , եւն .

Մասիս , Արագած , Նըպատ և Չիրաւն ,  
Սիրով տեղի տան ձեր սուրբ միութեան .  
Դուք նոցա գըլխին կեցէ՛ք Հայաստան ,  
Ուրտեղ վիտանգ կայ , հասէ՛ք օգնութեան :  
    Ապրին պաշտպանք մեր Ազգին , եւն .

Մինչ մեր սեւ բաղդէն՝ սատանն այն վազան  
Լրկէր խեղճ Հայոց՝ վըշտօք զանազան ,  
Դուք նորա դարձաք սարսափ յաւիտեան ,

Չորս նորին վանեալ տարայք ցիրուցան ,  
Ապրին պաշտպանք մեր Ազգին , եւն .

Չի մոռնար Անին զայն ձեր յաղթութիւն :  
Չոր վատ թըշնամեացն արարիք նըկուն ,  
Անու հայ գերեաց հասաք յօգնութիւն ,  
Խոււմբ խոււմբ փրկեցիք դառնալ յիւրեանց տուն :  
Ապրին պաշտպանք մեր ազգին , եւն .

Դ. Վ. Փիրղալեկեան

### ՊԱՐ ՆԱԻԱՍՏԵԱՅ

Աշխոյժ նաւաստին  
Անվեհեր ճակատ  
Ընդդէմ փոթորկին  
Երգէ անփոյթ զուարթ ,  
Լարիթ թիւլէրէլէլլէ հա' , հա' , հա' .

Կոհակք փըրփրադէզ  
Չեն սոսկում, վախ մեզ .  
Հողմունք սաստկահար՝  
Գըրգռն մեզ ի պար :  
Լարիթ թիւլէրէլէլլէ հա' , հա' , հա' .

Օ՛ն , խըմենք զուարթ ,  
Գինին մինչ յատակ ,  
Օ՛ն , զըրկենք զիրար ,  
Պարենք անգողար :  
Լարիթ թիւլէրէլէլլէ հա' , հա' , հա' .

Լըռեցէ՛ք , գիտեցէ՛ք ,  
Մինչդեռ մենք հոս եկած ենք .  
Ահա ժիրն՝ իւր ոտքերն  
Հոս հոն շուտ տանի փոյթ :

Ա՛յ ա՛յ ա՛յ . պիտ՛ իյնայ ,  
Օ՛ն , բրռնենք՝ մեզք է մեզք .  
Հա՛ հա՛ հա՛ , կը խընդայ ,  
Հոս եկէ՛ք , ամենքս ալ ծափ զարնենք :

Չանգակն ու ժգնապիրկ՝  
Կոչէ զմեզ ի կարգ ,  
Վերջ տանք խընդութեան ,  
Քաշենք մեր պարան :  
Լարիթ թիւլէրէլէլլէ հա՛ , հա՛ , հա՛ .

### ՇՈՒՇԱՆԻԿ

Է՞ր հեռանաս քո մայրենի աշխարհից ,  
Կարօտ թողուս սիրտ բարեկամ քեզանից .  
Մեր ամենուս դու մայր էիր զըլթուսատ ,  
Արդ հեռանաս՝ մեզ մուծ պատէ անփարատ :

Քո սուրբ ձեռօք մեր վէրքերը շատ անգամ  
Լուանայի՛ր՝ գեղ դընէիր ամեն ժամ .  
Քո մագերից ոլորէիր վիրակապ ,  
Քո բոլոր կեանք ազգիդ համար էր անկապ :

Ուր որ երթաս , ուր որ լինիս տիրուհի ,  
Մեր սիրտն , հոգին քեզ հետ տանիս , մաքրուհի

Գնաս բարեաւ, մեր յոյս, հաւատ քեզ ընկեր  
Աչն ու խաչը քեզ պահպան օր գիշեր :

### ՀԱՅՈՑ ԱՂՋԻԿՆԵՐ

Հայոց աղջիկներ ձեր հոգուն մատաղ,  
Երբ միտս էք գալիս՝ ասում եմ միշտ ա՛խ .  
Հալվում եմ, հալվում օտարութեան մէջ .  
Ա՛խ, սիրտըս խորվում, ցաւիս չիկայ վերջ :

Երբ կարմիր գինին բաժակուս ամա՛ծ՝  
Սեղանիս վրայ առաջս է գրած,  
Աչքըս ակամայ վրբան եմ ձրգում .  
Ձեր սիրուն պատկերն եմ մէջը տեսնում

Տեսնում եմ և, ա՛խ, միտքս է մոլորվում,  
Դառն արտասունքով աչքըս պըղտորվում :  
Կարծում եմ բոլոր աշխարհը մըթնեց .  
Արեւն էլ խաւրեց . էնտուր որ տըխրեց :

Հայոց աղջիկներ ձեր հոգուն սեռնիմ .  
Ձեր սիրուն աչքերն էլ ե՛րբ կը տեսնիմ .  
Է՛ն սեւ սեւ աչքերն սեւ ունըով պատած .  
Կարծես երկնային զաւամով քաշած :

Է՛ն սեւ սեւ աչքերն որ շատին սպանեց՞ .  
Բայց էլի շատին դժոխքից հանեց .  
Ես էլ կեդանի տեղովս եմ մեռած  
Առանց կրակի էրուած խորոված :

էլ ե՛րբ կը տեսնեմ ես ձեզ ման գալիս,  
Բազ ու բաղչայում սէյրան անելիս,  
Ի՞նչ տեղ ամօթից վարդն էլ է դեղնում,  
Երբ որ ձեր կարմիր թըշերը տեսնում .

Բըլբուլն էր վարդից ձեր ձայնը յսելիս՝  
Թըռչումէ, թըռչում, ամպերում կորչում,  
Եւ իր արարչի տեսածն ասելիս,  
Փա՛ւք քեզ, Տէր Աստուած, փա՛ւք քեզէ կանչում

Հայոց աղջիկներ՝ ի՞նչ անուն տամ ձեզ,  
Թէ հրեշտակ ասեմ՝ հրեշտակ չեմ տեսել,  
Թէ մարդ անուանեմ՝ բէդամաղ կ'անեմ՝  
Ուրիմն ի՞նչ անեմ՝ մոլորուած եմ ես :

Մոլորուած եմ ես օտար աշխարհում,  
Հաւատն էլ օտար, օտար և լեզուն,  
Աղջիկն էլ օտար ու ձեզ չի նըման,  
Հայոց աղջիկներ դուք էք աննըման :

Ձեր սէրն է միայն սրտուժըս պահած,  
Ձեր սիրով միայն եմ ես կենդանի,  
Ձեր սէրը միայն էս կեանքըս մաշուած՝  
Օտարութեան մէջ դեռ կը պահպանի :

ԵՐԳ

Երբոր ազգին գահը փլաւ  
Երբոր ազգին թագը վերցաւ

Յայնժամ մոլի վատ կղերներ,  
Բարձրացուցին իւրեանց գահեր :

Լաւ է կրօնի չը հաւատալ,  
Քան թէ անող գերի ըլլալ :

Լաւ է որ մարդ բնաւ չապրի,  
Քան թէ ապրի այլոց գերի :

Փամփուշտ, կայծհան, վառօդ, զնդակ  
Սուտ լեցուր քոյին տուգրակ,  
Պատերազմի դաշտին մէջ՝ դուն,  
Ընտրէ մեռնիլ քան թէ քո տուն :

### ՔԱՅԼԵՐԳ. ՁԷՅԹՈՒՆԻ

Քանի թմրինք, բաւ է եղբարք,  
Շրջենք աչերնիս աջ ու ահեակ,  
Շատ ստրուկներ եղան ազատ :

Մինակ մենք մնանք թուրքին հնազանդ :  
Բաւ է եղբարք որչափ կրեցինք գերութիւն,  
Քիչ մ'ալ ելենք ցոյց տանք նորանց քաջութիւն :

Կեցցէ՛ Ձէյթուն, ապրի՛ Ձէյթուն,  
Թող չտեսնէ ստրկութիւն,  
Քանի ունի մեզ պէս քաջեր,  
Կեցցէ՛ Ձէյթուն, ապրի՛ Ձէյթուն,  
Բաւ է եղբարք, եւն.

Ձէյթունցի ենք, մեր դրօսանք  
Է պոտերազմ և արշաւանք,

Սուր, թուր, զնդակ և հրացան,  
Մեր խաղալիքն են յաւիտեան :

Բաւ է եղբարք, եւն.

Արեւ հլաւ Ձէյթունցիներ,  
Թ'էհ ձի հեծնենք առնենք զէնքեր,  
Մեր դրօսանքն է պատերազմ,  
Պատերազմ ու արշաւանք :

Բաւ է եղբարք, եւն.

Ձէյթունցի հմք քաջեր ունիմք,  
Տաճիկներէն մենք վախ չունինք,  
Մեր մայրենի սուրբ կաթի հետ,  
Կաթիլ կաթիլ արիւն ունինք.

Բաւ է եղբարք, եւն.

### ԿԻԼԻԿԻՆ

Երբոր բացուին դռներն յուսոյ  
Եւ մեր երկրէն փախ տայ ձըմեռ,  
Չըքնաղ երկիրս մերս Արմենիոյ  
Երբ փայլէ իւր բաղցրէկ օդեր,  
Երբոր ծիծառն ի բոյն դառնայ  
Երբոր ծառերն հագնին տերեւ,  
Ցանկամ տեսնել զիմ կիլիկիա,  
Աշխարհ՝ որ ինձ ետուր արեւ :

Տեսի դաշտերըն Սիւրիոյ,  
Լեառն Լիբանան և իւր մայրեր,

Տեսի զերկիրն ի դալիս ,  
 Վենետիկ և իւր կանտոններ ,  
 կըզգի նրժան չիք մեր կիպաւ ,  
 Եւ ոչ մէկ վայր է արդարեւ  
 Գեղեցիկ քան զիմ կիլիկիա ,  
 Աշխարհ՝ որ ինձ ետուր արեւ :

Հասակ մը կայ մեր կենաց մէջ  
 Ռւր ամենայն իզձ կ'աւարտի ,  
 Հասակ մը ուր հոգի ի տենչ՝  
 Յիշատակաց իւր կարօտի ,  
 Յորժամ քընարս իմ ցրտանայ ,  
 Սիրոյն տալով վիրջին բարեւ ,  
 Երթամ նընջել իմ կիլիկիա ,  
 Աշխարհ՝ որ ինձ ետուր արեւ :

Ն Ռոշտիկեան

### ՔԱՅԼԵՐԳ ՍԱՍՆՈՅ

Սասուն ելաւ ապստամբեց ,  
 Աշխարհի մէջ հանեց թուր ,  
 Ամերիկա Եւրոպ ցնցեց ,  
 Քաջաց բանակ զունդազունդ :  
 Հայոց սրտեր թրթռացին ,  
 Հայու ձայնը որոտաց ,  
 Կտրիճք լառաջ շուտ խաղացին ,  
 Ազատութիւնը թնդաց :

Ախ Սասունցիք , քաջ Սասունցիք ,  
 Չեր արիւնին մենք զուրպան ,  
 Միութեան սուրբ սերմեր ձըլին ,  
 Ազատութեան մենք զուրպան :

Թուրքը լսեց և կատաղեց ,  
 Զօրքեր հանեց բիւրուոր ,  
 Յիսուն հազար քիւրտեր կանչեց ,  
 Արիւնարբու զօրաւոր ,

Եւ Սասունը պաշարեցին ,  
 Այն վայրենի գնդերը ,  
 Թնդանօթներ որոտացին ,  
 Քարքանդ բրին գիւղերը :

Ախ Սասունցիք , քաջ Սասունցիք ,  
 Չեր արիւնին մենք զուրպան ,  
 Ախ սուրբ հողիդ անմահ որդիք ,  
 Գիակներնուդ մենք զուրպան :

Մօր արգանդը թուրքը պատուեց  
 Գլուխն անցուց նիզակին ,  
 Մինչ վերջին շունչ Սասուն կուռեց  
 Ազատութեան կարօտով :

Ախ թուրք ու քիւրտ բռնաւորներ ,  
 Նզովք ըլլայ ձեր գլխուն ,  
 Միշտ կտրիճ են Սասունցիներ ,  
 Նզովք Զէքի քո անուն :

Եւ արիւնը գետի նման ,  
 Թրջեց Սասնոյ վեհ սարեր ,

Հայք բերաւոր կոտորվեցան,  
Բռնութեան քաջ սուլբ զոհեր:

Եւրոպ տեսաւ ցնցեց անդին,  
Ապշած նայեց Հայիրուն,  
Տեսաւ վիճակ գէշ է թուրքին,  
Եւ խորհեցաւ շահերուն:

Եւրոպ արեան չը հաւատաց  
Եւ յանձնախումբ մը ծնաւ,  
Թուրքն ալ յառաջ ինկաւ խնդաց,  
Չիւնտ լեռներ ցուց տուաւ:

Եւրոպա ա՛խ, մօր մը պէս խորդ,  
Հայ գիակներ կը ծաղրես,  
Թուրքն կընտրես քեզ առաջնորդ,  
Այս ի՞նչ կատակ մեզ կ'անես:

Կեցցէ՛ կռիւ, կեցցէ՛ արիւն,  
Այս է ճամբան միշտ մեզի,  
Մեր արիւնը Եւրոպային  
Անշուշտ թէ քիչ կը թուի:

Ազատութեան համար անմահ  
Թող ելլէ ողջ Հայաստան,  
Մեր արիւնոզ մեզ է ներկած  
Շահախնդիր Եւրոպան:

Սասունցի կին, Սասունցի քաջ,  
Չեր արիւնին մենք զուրպան,

Միութեան սուրբ սերմեր ծլին,  
Ազատութեան մենք զուրպան:  
Պերձ Մուշու

### ՀԱՅ ԱՊՐԻՆՔ

Հայ ապրինք, եղբարք, մարդկութեան մէջը  
Հայ կ'ըքեք է մեզ պատմութեան էջը.  
Հայ սնուամբ զմեզ կողջունեն երկինք  
Եղբարք Հայ ապրինք:

Հայ ապրինք. — մեր հայրն է այն Գիւցսղուն  
Որ զազատութիւն սորվեցուց մարդուն,  
Ու մեզ վեհ անուն մը տուաւ բաժինք  
Եղբարք Հայ ապրինք:

Մեր աշխարհն է սուրբ. մեր հողուն վրան,  
Աստուած է քաղեր հանելով զԱրամ.  
Մեր լեզուն ստեղծեր ու խօսեր նախ ինք.  
Եղբարք Հայ ապրինք

Հայն ու մարդկութիւն՝ նոյն ունին օրրան,  
Երկիր փրկութեան է մերս Հայաստան,  
Կրօնից նախկին սեզան է Մասիք.  
Եղբարք Հայ ապրինք:

Հայուն պերճ անուն՝ ո՛չ միայն յերկիր՝  
Ա.Ս. և եթերց մէջ շողայ լուսալիր.  
Քաջ Հայկին աստեղք անմահ են յերկինք.  
Եղբարք Հայ ապրինք:

Հայ ապրիներ .— ո՞ր ազգ կայ Հայուն նըման ,  
 Որ ունենայ հին պօրժանքներ այս քան ,  
 Ո՞ր ազգ Հայուն պէս չըքեղ հայրենիք ,  
 Եղբարք Հայ ապրիներ :

Ըսէ՛ք , ո՞ր ազգին՝ չորս առաքելայններ  
 Երկնից թագաւորն է դեպպան զբրկներ ,  
 Ո՞ր թագաւորին հետ թըղթակցեր ինք .  
 Եղբարք Հայ ապրիներ :

Ո՞վ կըրնայ համբել սրբոց մեր զանուանք .  
 Մեր պատմութիւնն է նահատակաց ցանկ .  
 Մեր եկեղեցին յերկրի է երկինք .  
 Եղբարք , Հայ ապրիներ :

Քրիստոսի ունինք անդրանիկ օրհնենք ,  
 Հաւատոց եղանք միշտ ախոյեան մենք .  
 Հայը զարմացուց զերկիր և զերկինք ,  
 Եղբարք , Հայ ապրիներ :

Մեր ազգ հետեւող է ճիշդ Յիսուսի .  
 Որ խաչն այսչափ դար առած է յուսի .  
 Ո՛չ , չը խանարհիր չըլլար դաստիք .  
 Եղբարք Հայ ապրիներ :

Այո՛ , խաչին կեանք՝ կեանք է վըշտալից ,  
 Այո՛ , Հայուն կեանք՝ կեանք է ցաւալից ,  
 Բայց խաչն յաղթութեան ունի վեհ կնիք .  
 Եղբարք Հայ ապրիներ :

Ո՛չ , ճակատագիր մեր չէ միշտ տըխուր՝  
 Ըզթշուառութեան ուտիլ հօցն ու ջուր  
 Նոր երջանկութեան ապագայ մ'ունինք .  
 Եղբարք Հայ ապրիներ :

Հայ ապրիներ , որ մեր օրդիք էլ , եղբարք ,  
 կարենան պարծիլ որ զմեզ ունին հարք .  
 Չըլլանք հայ անուան չըլլանք նախատինք .  
 Եղբարք , Հայ ապրիներ :  
 Խորեկն Եպիսկոպոս Նար — Գէյ

## ԵՐԳ

Թէ թեւ ունէի ո՛հ կը թըռչէի  
 Ապա Մասեաց արերն ի վեր ,  
 Ես ուժգին ես ուժգին .  
 Անկէ ձեզ Հայեր կարգայի հրաւէր .  
 Անկէ ձեզ Հայեր կարգայի հրաւէր ,  
 Թ'եկէք Հայեր ըլլանք մէկ սիրտ մէկ մարմին ,  
 Սիրեմք ընկեր զընկեր սիրեմք կաթողին :

Թէ դեռ յիմ արիւն չ'խառնուէր թոյն ,  
 Դեռ իմ երակաց մէջ աշխոյժ  
 Խաղային խաղային ,  
 Ոհ քանի հպարտ կանչէի ազատ . (կրկնէ)  
 Թ'եկէք Հայեր ըլլանք մէկ սիրտ մէկ մարմին ,  
 Սիրեմք ընկեր զընկեր սիրեմք կաթողին :

Թէ կեանք ունէի ո՛հ կը լարէի .

Թեւ քընարի բաղդին Հայոց  
 Անկենդան, անկենդան,  
 Որ նա ձեզ խօսէր ձեզ պանդուխտ Հայեր (կրկնէ)  
 Թ'եկէք Հայեր բլլանք մէկ սիրտ մէկ մարմին,  
 Սիրեմք ընկեր զընկեր սիրեմք կաթողին:

Թէ սեր բլլայի կամ անմահ հոգի  
 Կը կապէի Հայոց սրտերն  
 Անմեկին, անմեկին  
 Յայնժամ և նոքա մի որդիք Հայկայ (կրկնէ)  
 Կրլլան իմի անշուշտ մէկ սիրտ մէկ մարմին,  
 Սիրենք ընկեր զընկեր սիրենք կաթողին:

### ՀԱՅԱՍՏԱՆ ԱՇԽԱՐՀ

Որն է աշխարհն Հայաստան  
 Միթէ սա է Պարսկաստան  
 Որի պատկերն է Սողոմ և Գոմոր  
 Ընտանի կեանքն է Բաբելոնի խմոր  
 Չէ չէ չէ չէ, այդ չէ մեր աշխարհ  
 Այլ է մեր աշխարհ այլ է

Որն է աշխարհ Հայաստան,  
 Միթէ սա է Ռուսաստան,  
 Որ իւր բռնութեամբ գերել է աշխարհ  
 Ազգին ճիգն ու ջանքն յաւիտեան կործան,  
 Չէ չէ եւն.

Որն է աշխարհ Հայաստան,  
 Միթէ սա է Տաճկաստան,

Ուր իրաւունքից կանայք են զրկած .  
 Կանանացի մէջ կենդանի թաղուած,  
 Չէ չէ եւն.

Ո՞րն է աշխարհ Հայաստան:  
 Միթէ սա է Ֆրանքիստան:  
 Որ իւր ճոխ զգեստուք տիրել է աշխարհ,  
 Հուսաւորութեամբ առաջինն է նա.  
 Չէ՛, չէ՛, եւն.

Ո՞րն է աշխարհ Հայաստան,  
 Ահա սա՛ է Հայաստան,  
 Որ իւր քաջութեամբ հաւատն ու կրօն  
 Պահպանել է մինչեւ ի ցայսօր .  
 Հա՛ հա՛ հա՛ հա՛ ճիշդ է մեր աշխարհն  
 Այդ է, մեր աշխարհն այդ է:

### ՈՂՁՈՅՆ

Ողջոյն տուէր իմ հայրենեաց,  
 Կիսակործան տաճարներուն,  
 Ողջոյն տուէք աւերակաց,  
 Արարատեան գաւառներուն:

Ողջոյն տուէք Աւարայրին,  
 Արիւնաներկ սուրբ վայրերուն,  
 Ողջոյն տուէք Թխուր լուսնին,  
 Որ լացն է սեւ շիրիմներուն.

Ողջոյն տուէք պանդուխտ Հայուն ,  
Թշուառ Հայուն չուառ Հայուն ,  
Ո՛հ ձեռք տուէք , ո՛հ սիրտ տուէք ,  
Հոգի տուէք անկեալ Հայուն :

Ողջոյն տուէք ոլոր մօյօր ,  
Մոյօր վազող գետակներուն :  
Ողջոյն տուէք պղտոր բոլոր  
Աղի լեզի աղբիւրներուն :

Ողջոյն տուէք ի հոյ եղած  
Արքայական պալատներուն ,  
Ողջոյն տուէք գետնատարած  
Սրբոց ամբիժ մասունքներուն :

Ողջոյն տուէք դուք՝ խումբ ի խումբ  
Որ կան թաղած , հոգիներուն ,  
Ուր հայ սօխակք թումբէ ի թումբ  
Կեանք կը խնդրին գեռ շատերուն :

Ողջոյն տուէք հայ Մուսային  
Որ լայ զփառս իւր հաւերու ,  
Ողջոյն տուէք իմ քնարին  
Որ Հայկայ տանն է ողբերգու :

### ԵՐԳ

Արե՛ք ընկերք քաջակորովք ,  
Ի պատերազմ զիմենք փութով ,  
Մեր ըսկզբունքն է պաշտպանել ,

Ազատութեան զըրկանք վանել .

Անգոյթ ապաստան

Արդար դատաստան

Մեր արիւնտային

Կայ վասն թշուառին :

Փութամք հապճեպ , ի զէն , ի սուր  
Ըզբընծութիւն տալ առաթուր .  
Դոքա ունին թէև սուր , զէն  
Այլ իրաւանց սուրբ պաշտպան չեն .

Օն մեք ի ճակատ ,

Չիք ի մեղ արատ ,

Միցէ՞ և բաւ

Խորէնութիւն , դաւ :

### ՈՐՍՈՐԴԻՔ

Հապա քաջազունք , Հայոց զաւակունք ,  
Առէ՛ք աղեղունք ՚ի մահ երագունք .  
Անտառք ըսպասեն , կենդանիք սարունն ,  
Չինուցդ ՚ի ձայնէն կենդանիք սարսեն .  
Շեշտակի նետեր թափեցէ՛ք՝ քաջեր ,  
Յէրէս անվահեր :

Վազենք ուր վըտանդ՝ այս մեր ըզբօսանք ,  
Որսոց արշաւանք՝ մարտից են կըրթանք .  
Երթանք գունդ ՚ի գունդ՝ յաղեղ և մըկունդ ,

Յուսով սըրտաթունդ՝ յաղեղ և մըկունդ,  
Շամփրեմք զկենդանիս իբր ըլթըշնամիս  
ի մեր Հայրենիս:

Չի օր մ'ալ նոյնպէս՝ մարտին ի հանդէս  
Չարնենք մահազգեանց զօտոխս հայրենեաց,  
Եւ յաղթանակաւ լրցեալ աւարաւ՝  
Դառնամք քաջարչաւ լրցեալ աւարաւ՝  
Եւ ՚ի մեր դափնիք ծափ տան սիրելիք  
Պանծոն Հայրենիք:

Խ. Վ. Գալֆանեան. Խ. Ե. Ն.)

### ՄԱՅՐԵՆԻ ԼԵՂՈՒ

Ո՛վ մեծասքանչ դու լեզու  
Ո՛վ հեշտ բարբառ մայրական,  
Փափկահընչին բառերուդ  
Նըման արդեօք այլ տեղ կա՞ն.  
Դուն որ նախ ինձ հընչեցիր  
Նախ սիրոյ ո՛հ հեշտ խօսքեր,  
Այն նախ զքեզ թոթովես՝  
Դեռ իմ մըտքէս չէ ելեր:  
Իմ մայրենի քաղցր լեզու  
Կե՛աց անսասան, կեա՛ց յաւէտ,  
Կեաց միշտ լեզուդ հայկարժան,  
Կե՛աց ծաղկալից ծաղկաւէտ:

Ինչ դառն վիշտ է սըրտիս  
Երբ օտար տեղ ու լեզու՝

Բընի իրեն զիս քաշէ,  
Սըրտէս արիւն կը հեղու:

Ո՛հ, զայն օտարն ես սիրել  
Բնաւ չեմ կարող ՚ի սրտէ,  
Չէ՛ այն՝ չէ՛ քաղցր իմ լեզու,  
Որ սիրով զիս կ'ողջունէ:  
Իմ մայրենի քաղցր լեզու եւն:

Լեզու համակ սիրաշարժ,  
Քանի ճօխ, պերճ ու պայծառ

Մինչ կը հընչես դուն քեզի  
Սըրտերն ամեն գողացար:

Հընչէ՛, հընչէ՛ յաւիտեան,  
Վեհ դիւցողանց պերճ երգ դու.  
Թօթուէ՛ փոշիդ խոր մութէն  
Ե՛լ երեւան պերճ երգ դու,

Իմ մայրենի քաղցր լեզու եւն:

Յաւերժական սուրբ գրոց մէջ  
Կեա՛ց միշտ նորէն ու նորէն,  
Կըռեալ անոյշ բու տողերդ  
Թող ամեն սիրտ արժարձեն:

Շընորհ ունել Արարչէն  
Կամ պէտք ըլլայ աղօթել,  
Շըրթունքըս սըրտէ բորբոքած  
Կ'աղաղակէ անարգել:

Իմ մայրենի քաղցր լեզու եւն:



## ՀՐԱԽԷՐ

Տեսէք աղանին Նոյան տապանին ,  
 Եկած ու կանգնած ի սար Տարբասի :  
 Աւետիս կուտայ Հայկեան սերնդին ,  
 Թէ եկաւ գարուն թորգոմայ զարմին :  
 Արթընցէք Հայեր քաջաց զաւակներ ,  
 Առէք միութեան տէգ ու նիզակներ ,  
 Շուտով կազմեցէք սիրոյ խմբակներ ,  
 Հագէք քաջութեան զէն ու զրահներ :

Հինգ հարիւր ամնայ մի քուն քնացանք ,  
 զԱստուած ու զեղբայր իսպառ մոռացանք ,  
 Սիրոյ միութեան լաթեր մերկացանք  
 Ատելութեան ձեռք խաղալիկ դարձանք :

Մոռցանք հայրենիք մոռցանք Հայաստան  
 կորուսինք մեր փառք ու Արմենիստան .  
 Մաս մը Ռուսաստան մաս մը Պարսկաստան  
 Մնացինք Հայերս թըշուառ անպաշտպան :

Երկինք բարկացաւ հայրենիք լացաւ ,  
 Մեր ջուրն ու գինին մեզ արիւն դարձաւ ,  
 Խաչեալըն Յիսուս մեզի մոռացաւ  
 Հայերուս բաժին մընայ սուգ ու ցաւ :

Այսչափ երկար քունն ալ մեզ հերիք է ,  
 Թըմբիլ ու պառկիլ խիստ մեծ չարիք է .  
 Սիրելն ու սիրուիլ արդէն բարիք է ,  
 Հայու զինուորին համար պարտիք է :

Եկէք միանանք բանանք դպրոցներ ,  
 Մեր մատաղ մանկանց համար վարժացներ ,  
 Վառենք բորբորենք սիրոյ հնոցներ ,  
 Մեր սառած սրտին ըլլան հալոցներ :

Շուքի պէս անցան այս հինգ մեծ դարեր ,  
 Լացին Հայրենեաց դաշտերն ու սարեր .  
 Հերիք ալ ձեզի , հերիք է վատեր ,  
 Հերիք մեր բաժին արցունք ու ասեր :

## Ի ԳՍՀԱԿԱԼՈՒԹԻՒՆ ՏՐԴԱՏԱՅ

Յողատն 'ի վեր 'ի Մասիս ,  
 Արիք որդիք Հայկեան ,  
 Յըրուեալքդ ի մի խուճբ պարու  
 Քառից հողմոց փող ազգու՝  
 Աստուածախրախոյս ձայն :

Նախնի կամար բաղմերփեան ,  
 Ահամպատի զնովաւ ,  
 Ամպրոպայոյդ մըրըրկաց ,  
 Հաշտարան պատերազմաց .  
 Տարփալին ցուացաւ :

Չայն որոտաց ձայն ասեղ ,  
 Խորանաձեւ յարկէն .  
 — Արիագունդ տուն Հայկայ ,  
 Զտապալեալ դահիդ արքայ  
 Վերականգնեմ անդրէն :

Երգուեալ յազեղն երկնածիր ,  
 Բարձի զբաղդ ձեր ի մէտս .  
 Թաթ ձեր յեթեր սըլացաւ ,  
 Հակառակորդն սուզաւ .  
 Վայր ի սանդարամետս :

Դիւցազանց պար թորգոմեան ,  
 Տըխրազգեաց յեղիսեանս ,  
 Ըլըրթագոյն գիմաց մէդ ,  
 Յաստեղաց բոց վառին շէկ ,  
 Յաւետեաց հրաւիրանս :

Առդ իմ արի սպառազէնք ,  
 Տուք կայթս հըսկայաքայլ .  
 Դաշաք ի պղինձ բոցասցին ,  
 Լերինք ի նշուլ շըլասցին ,  
 Զոկատիցդ ի գեռալ :

Ահա ձեզ Հայկ երկնածեմ ,  
 Հայր ձերում բանակի .  
 Ասպարափակ հովանեաւ ,  
 Զձեօք ի բարձանց փարեցաւ ,  
 Անթափանց նիզակի :—

Խումբ պար առեալ զարքայիւ  
 Զօրավարք Արամայ ,  
 Բոլորեցէք համերամ ,  
 Պըսակ փառաց անթառամ .  
 Կեցցէ՛ Տրդատ արքայ :

Հ. Ա. Վ. Բագրատունի

ԵՐԳ ԲԱԺԱԿԻ , ՎԱՍՆ ՄԻՈՒԹԵԱՆ

Ահա բաժակ ուրախութեան ,  
 Ի սէր յաւերժ միութեան .  
 Զի՞ վայելուչ՝ որդիք Հայկեան ,  
 Մէկտեղ հրճուին և ցընծան .  
 Կեցցէ՛ սէր և միութիւն  
 Կրրիմք մի սիրտ մի արիւն :

Վերցո՛ւր աչքըդ յերկնից կամար ,  
 Փայլի հեռուն աստղ մի պայծառ .  
 Եւ դու , ո՛ր Հայ , զարթի՛ր , սիրտ ա՛ռ ,  
 Հայոց բաղդըն ալ չէ՛ խաւար .  
 Կեցցէ՛ սէր և միութիւն , ևայլն :

Բաւ է այսքան բաժանում ,  
 Ըլլամք ուրախ եւ խընդում .  
 Նախանձ , վըրէժ , ձեզ թողում ,  
 Անդունդք և վիհք անհատնում .  
 Կեցցէ՛ սէր և միութիւն , ևայլն :

Փորձ մը ըրինք բաժանման ,  
 Փորձ մ՛ալ ընենք միութեան .  
 Լեցուի փափաքդ , Հայաստան ,  
 Տե՛ս որդիք քո միանան .

Կեցցէ՛ սէր և միութիւն , ևայլն :

Ինչ եւ ընեմք , ինչ կերպ առնենք ,  
 Ո՞ր չը գիտաց թէ մեք Հայ եմք .  
 Ո՞վ չը պիտեր թէ եղբայր եմք ,

Արի՛ք, ծիծաղ գիժօք երգեմք .  
Կեցցէ՛ սէր և միութիւն, ևայլն :

Ո՞ր բըռնաւոր, ո՞ր օրէքներ  
Կը պատուիրեն թէ մի՛ սիրեր  
Ազգիս օգուտն ու բարիքներ .  
Սէրոյ գահն է յերկինս 'ի վեր,  
Կեցցէ՛ սէր և միութիւն, ևայլն :

### ՀՈՎԻԻ, ՀՈՎՈՒՈՒՆՅ

Երբ օգը անձրեւի է,  
Քու բարի մայրիկըդ  
Պէտք է խորճիթը պահէ,  
Այդ քու փափուկ անձրդ :

—Մ'օրըս խոզը չէ թէ թըրչիմ,  
Կ'ասէ, շուտով 'տի երթաս,  
Չէ նէ կ'իլիմ փետով մը  
Քեզ տըռօշմեմ ուռնաս :

—Շատ կը ցաւիմ որ ձեր հետ  
Այսպէս խըստիւ վարուին,  
Եթէ կ'ուզէք ինձի հետ  
Փախչիլ ի միասին :

—Ախրէր, ինչո՞ւ 'տի փախչիմ,  
Ետեւէս մարդ չի վազեր .  
Կովերըս որո՞ւ 'տի ձըգեմ,  
Որ ուրիշ մարդ չեմ սիրեր :

—Ո՛վ դու ազնիւ հովուուհի,  
Ընդէ՞ր մերժես իմ սէր .  
Քո գէմք նըման է լուսնի .  
Որ իմ սըրտիս տիրէր :

—Չեմ խասկանայ քո լեզուդ,  
Ի՞նչ կ'ուզես դուն ինձմէ,  
Ամէն բէնի եմ հըմուտ,  
Այս դուրս է իմ գրլիւէ :

—Տո՛ւր ինձ քու ձեռքդ ու երթանք  
Դէպ ի անտառին խորըն,  
Հոն գրտնենք մեր ապաստան,  
Նախանձի թագաւորըն :

—Պարոն, կեցեր ի՞նչ կ'ասես,  
Ես իմ կովերը կ'արածեմ .  
Գընա՛ ուրիշ մը գրտնես,  
Անտառն երթամ ի՞նչ անեմ :

—Թո՛ղ որ գոնէ քու այտէն  
Ընդունիմ ես մէկ համբոյր .  
Սըրտիս տիրեցիր արդէն,  
Անուանեմ քեզ ինձի քոյր :

—Ատի չգիտեմ ինչ բան է,  
Պէտք է իմ մօր խարցունեմ,  
Անի թէ տո՛ւր որ ասէ,  
Ինչ որ է քեզ նուիրեմ :

—Գիտեմ, մայրըդ կ'արգիլէ,  
Պէտք չէ անոր հարցունես .

Սիրտըդ իմ սըրտիս փարէ՛,  
Պատասխանը դու կառնես :

— Պարոն՝ շատ լաւ կը խօսիս ,  
խօսկացոյ ես քու միտքըդ ,  
Բայց սա փէտ որ կը տեսնես ,  
կը չափեմ ես քու չորս գիդ :

Յ . Աձեմնան

### ԶԵՓԻԻՌ ՄԱՆԿԱՆՅ

Դու փափկաթեւ մանկիկ զեփիւռ ,  
Ազբերց վրայէն լուսակարկաջ ,  
Անուշ հոտով ծաղկանց ըսփիւռ ,  
Ի՞նչպէս թըռչիս ինձ ընդ առաջ .  
Ու խունկ և զով ընծայելով ,  
Զիս ողջունես հեզիկ շընչով :

Ո՛հ , կը սիրեմ ըզքեզ հողմիկ ,  
Երբ կը փութաս ինձի գալու .  
Ի պար ի թռիչ ի սոյլ մեղմիկ ,  
Այրած ճակտիս իմ այցելու .

Ծագիկ հոգևոյս քեւ զովացած ,  
Ծիւ ծիւ բացուի ի լոյս կենաց :

Սլացիր փափկիկ դու սուրհանդակ ,  
Լուր առ՛ւր հովտին ու ծործորին ,  
Ու անտառաց բարձրագիտակ ,  
Ուր երամոյ սոխակք թառին :

Թէ մտերիմն խրեանց եկաւ ,  
Բիւր զմայլմանց յիշատակաւ :

Ո՛հ , կորուսած իմ հաճոյքներ ,  
Հոս վերջստին գըտնեմ զձեզ .  
Ծառոց շըքով էք ծածկուեր ,  
Ու փըրփուրով առուակին հեզ .  
Ահա կայտաէք ի յայս ծըմակ ,  
Ի յայս թըրփուտ հովանոցակ :

Հոս դառն հոգեր մէկիկ մէկիկ՝  
Ճակտես ի բաց հեռանային ,  
Եւ հոյլք ժամուց զեղապարիկ .  
Սիրաքս թեթեւ օրօրէին :

Եւ բնութիւն՝ մայր որդեսէր ,  
Բընքուշ գըրկաց մէջ մեզ գըզուէր :

Հոս ճեմէին երեկոյեան  
Ի զով ըստուեր պար մի կուսից ,  
Մազեր հովուն բազմաբուրեան ,  
Սիրտք ընծայուած հեշտ վայելից .  
Շող լուսնակին , կոյան ու ծաղիկ  
Զիրար շոյեն սիրատարփիկ :

Մըտերմութիւն , սէ՛ր կրակուբոց ,  
Ի՞նչ անուշ էք յայս տեսարան ,  
Ուր դալարիք ձեզ հանգըստոց ,  
Ի՛անհուն դաշտեր ըզբօսարան :

Մըտերմութիւն , ինձ երանի՛ ,  
Թէ հոս ծոցէդ հոգիս թըռչի :

Դու փափկաթեւ մանկիկ զեփուս,  
 Աղբերց վրայէն քաղցրակարկաջ,  
 Անուշ հոտով ծաղկանց բսփուս,  
 Թըռի՛ր, թրսի՛ր ինձ բնդ առաջ .

Ու խունկ և զով բնծայելով՝  
 Իմ շուրջ պատէ հեղիկ շրնչով :

Մ. Պէշիկրաշեան

**ԽՐԱԽՈՅՍ**

Հայրենեաց սիրով փռուած վեհ սրտեր  
 Ինչ կը յապաղէք ելնել ի հանդէս .  
 Ինչ կը յապաղէք. — սիրտ կը գիտանայ  
 Սիրտ՝ որ ազգասէր ըլլալ կը ցանկայ

Տեանել Հայրենեաց այսքան բիւր աղէտ  
 Եւ գեռ անտարբեր ցարդ մնալ յուէտ .  
 Խեռ ատելութեան և չար նախանձու  
 Սերմերն ու ոգին հեռու մղենք հեռու .

Սիրտ սրտի կապուած թեւ թեւի տուած  
 Հայրենեաց սիրոյ ասպարէզն բացուած ,  
 Օն վաղենք յառաջ ի սուրբ խաչն փստահ .  
 Օն նրթանք յառաջ եւ անձնանուէր  
 Հայրենեաց օգտին ըլլանք ուխտանուէր :

Հայ, մի՛ վհատիր, սիրտ առ և սիրտ տուր,  
 Տկարք զօրանան, քաջք խրախուսուին .  
 Վատերը բացուին, վատերը զոտուին ,

Ճշմարիտ Հայերն յառաջ թող անցնին .  
 Խաչ, սէր է նշան ճշմարիտ Հայուն ,  
 Խաչ, սէր է ծախմանք ճշմարիտ Հայուն :

**ԵՐԳ**

Ռուսական պետութիւն՝ Հայեր, բաւ  
 աշխարհի  
 Բաւ է Քրիստոնեայք ո՞հ հայեր ըլլան  
 խեղճ գեբի  
 Բացեց պատերազմ հայեր ընդ դէմ  
 թուրք ազգին  
 Ափսոս այն ազգակից վախ հայեր ի զուր  
 զո՞հ գացին :

Ռուսական բանակն՝ հայեր, մտաւ  
 Հայաստան ,  
 Օսմանեան զօրքերն՝ վախ հայեր, դէմ դէ-  
 մի ելան .  
 Հրացան թնդանօթ՝ հայեր, գոռալ  
 սկսան  
 Ափսոս այն ազգակից վախ հայեր ի զուր  
 զո՞հ գացին :

Հայկազն Մելիքօֆ՝ հայեր, ժեներալ  
 Ռուսաց  
 Կարսը շրջապատեց վախ հայեր վրայ  
 ուուր տեղաց  
 Ռուսներն այրեցին հայեր մըզկիթներ  
 Թըրքաց ,

Ափսոս այն ազգակից վախ հայեր ի զուր  
զոհ գացին :

Տաճկաց լուր զրկեց՝ հայեր, լորիս  
ձերունին ,

Հայոց մայրաքաղաք պիտ՝ լինի ցանկալի  
կարին :

Եթէ շուտ շրջասնիք , հայեր ժամր  
մարանչին ,

Ափսոս այն ազգակից վախ հայեր ի զուր  
զոհ գացին :

### ԵՐԳ ԱՌ ԵԶՆԻԿ

Դատարանին իմացուցին ,

Ժողովրդէս զիս զատեցին ,

Տիգրանակերտ ուղարկեցին .

Արի Եզնիկ այ քաջ Եզնիկ :

Մնաք բարեալ նորէն կուգամ ,

վատ թուրքին դէմ սարսափ կուտամ :

Ու հռանդով քարոզ կուտամ :

Արի Եզնիկ այ քաջ Եզնիկ :

Ալէճուլուին տակ կայնեղայ ,

Դէպ Հայրենիքըս նայեցայ .

Սուրբ ձեռքս բանակ մտայ .

Արի Եզնիկ այ քաջ Եզնիկ :

Քահանաներ զիս պատեցին .

Սեւ զգեաճներըս հազուցին ,  
Ճերմակ ձիուս նըստեցուցին .  
Արի Եզնիկ այ քաջ Եզնիկ :

Օր պիտ՝ ըլլայ վերադառնամ ,  
Գահիս վրայ հանգըստանամ ,  
Ժողովրդիս հետ միանամ .  
Արի Եզնիկ այ քաջ Եզնիկ :

### ՀԱՅԻ ԳԱՆԳԱՏ

Մեզի մուցաւ Հայոց ազգը ,  
Չի լըսեր մեր պաղատանքը ,  
Տեսնել չուզէ մեր տանջանքը .  
Ապա որի՞ն մենք գանդրտինք :

Ա՛ստուած սրտով որ բարի ես ,  
Մենք վար , Դուն վեր—չառ հեռի ես .  
Այժմ ալ խոշոր գործերի ես .  
Ապա որի՞ն մենք գանգըտինք :

Յոյնը մեզի ասլը կատէ ,  
Նէժցէն մեզնէ կրօնքով պատ է ,  
Ֆրանկի բանը , կասեն , վատ է .  
Ապա որի՞ն մենք գանգըտինք :

Թուրքին միտքը դէպ ի Պալգան ,  
Իսպառ մուցաւ նա Հայաստան .  
Նրբան պէտք է լոկ մեր փարսն .

Ապա որի՞ն մենք գանգըտինք :

Մեր Տեղը քով կտրիճներ կան ,  
Պէտք որ եղաւ՝ ստակ ալ կուգայ ,  
Մինակ ճամբայ ցուցնող չիկայ :

Ապա որի՞ն մենք գանգըտինք :

Հայի դաշտեր , արեան դաշտեր ,  
Շատ կուլ տըրիք Հայի քաջեր ,  
Թէ որ ձեզնէ մէկը ելէր ,  
Մեր գանգըտին վերջ կը դնէր :  
Քաւնառ-Քարիպա

ՎԱՆԵՅԻ ՄՕՐ ԵՐԳԸ

Պըզտիկ տղայ՝ չեմ օրօրիլ օրօրանքդ ,  
որ քուն լաս ,  
Հայ աղբարքըդ ոտքի ելան , մինակ դո՞ւ ետ  
պիտ՝ մընաս .  
Չարթէ՛ հոգիս , անուշ քունէտ , թո՛ղ աչքերըդ  
լուս տեսնին  
Արեւիքէն արեւ ծագեց , բաղբը բանեց  
Հայ ազգին ,

Չար սուլթանի ոսկի թախտը Չարգըւեցաւ  
վար ինկաւ ,  
Թախտի տակէն հազար ազգաց ազատութիւն  
ծագեցաւ .  
Ո՛վ որ շուտով ոտքի ելէ , ազատութիւն  
կը գտնէ .

Սիրուն որդի՞ս միթէ մենակ չար լուծի տակ  
պիտ՝ մըտնէ :

Մենք սուլթանին շատ խնդրեցինք կողկողագին  
ու լացինք ,

Աղի աղի արտասուքով ձեռք ու ոտքը  
լուացինք .

Քայց նա չանսաց պողատանքին սղորմելի  
Հայերուն ,

Ալժըմ , նայինք , նա կը լսէ՞ շառաչիւնը  
սուրերուն :

Տո՛ւր , սիրակոն , քակեմ ձեռքիդ պալուշները ,  
արձակեմ ,

Ու այդ թուրիկ աջիդ մէջը մի պոզպատէ  
սուր դընեմ .

Ըստրուկ զընա՛ արեան դաշտը , վերադարձի՛ր  
ազատուած .

Արդեօք մի օր պիտի լըսե՞ս մեր խընդիրքը ,  
ո՛վ Աստուած :

Քաւնառ-Քարիպա

ԿՌՈՒՆԿ

Կռո՛ւնկ ուսկի՞ կուգաս , ծառայ եմ ձայնիդ ,  
Կռո՛ւնկ մեր աշխարհէն խապրիկ մը չունի՞ .  
Մի վազեր , երամիտ շուտով կը հասնիս ,  
Կռո՛ւնկ մեր աշխարհէն խապրիկ մը չունի՞ս :  
Թողեր ու եկեր եմ իմ մըլքերս , ու այգիս ,

Քանի որ ախ կանեմ, կը քաղուի հոգիս .  
 Կոռ'նկ, պահ մի կեցի՛ր, ձայնիկդ ի հոգիս,  
 Կոռ'նկ, մեր աշխարհէն խապրիկ մը չունի՞ս :

Քեզ խապար հարցանողին չես տանիր տալապ,  
 Չայնիկդ անուշ կուգայ քան զՂրի տօլապ .  
 Կոռ'նկ, Պաղոտատ իջնուս, կամ թէ ի Հալապ,  
 Կոռ'նկ մեր աշխարհին խապրիկ մը չունի՞ս :

Սրտերնիս կամեցաւ, ելանք զընացանք,  
 Այս սուտ աստըվորիս տէրտերն իմացանք .  
 Աղու հաց կեր մարդկանց կարօտ մնացանք .  
 Կոռ'նկ, մեր աշխարհէն խապրիկ մը չունի՞ս :

Աստըվորիս բաներն կամաց կամաց է,  
 Եթէ աստուած լսէ դռնակն բաց է,  
 Ղարիպին սիրտն է սուգ, աչքերն ի լաց է,  
 Կոռ'նկ, մեր աշխարհէն խապրիկ մը չունի՞ս :

Աստուած՝ քեզնէ խնդրեմ մօրվէթ ու քերէմ,  
 Ղարիպին սիրտն է խոց, ճիկէրն է վերէմ,  
 Կերած հացն է լեղի, ու ջուրն է հարամ,  
 Կոռ'նկ, մեր աշխարհէն խապրիկ մը չունի՞ս :

Ոչ զլին գիտեմ, ոչ զկիրակին,  
 Չարկած է զիս շամփուրն, բռնած կրակին .  
 Այրիլս չեմ հոգար, ձեզնէ կարօտ եմ,  
 Կոռ'նկ, մեր աշխարհէն խապրիկ մը չունի՞ս :

Հաւատով պառկեր եմ, ներքեւս է Փըշխի,  
 Հստոյն ալ չեմ գարշիր, կը թուի մուշկի .

Շատ հասրէթ մնացանք անկողնու աօշկի,  
 Կոռ'նկ, մեր աշխարհէն խապրիկ մը չունի՞ս :

Ի Պաղտատու կուգաս, կերթաս ի Սեհրատ,  
 Թղթիկ մի դրերեմ, տամ քեզ ամանաթ,  
 Աստուած թող վկայ լինի քո վրադ,  
 Տարեալ հասուցանես զայդ իմ սիրելեաց,  
 Կոռ'նկ, մեր աշխարհէն խապրիկ մը չունի՞ս :

Գրեր եմ մէջ թղթիս, թէ հոս մնացի,  
 Օրիկ մի օրերուն աչքս չբացի .  
 Սիրելիք ձեզանէ կարօտ մնացի .  
 Կոռ'նկ, մեր աշխարհէն խապրիկ մը չունի՞ս :

Աչունն է մօտեցեր, գնալու ես թէպտիր,  
 Երամ ես ժողովեր հազար և բիւր .  
 Ինձ պատասխան չտուիր, ելար գնացիր,  
 Կոռ'նկ, մեր աշխարհէն խապրիկ մը չունի՞ս :

Այսօր դարիպուծիւնն միակ միաւոր,  
 Հոգևով և իմ մարմնով ես եմ մեղաւոր,  
 Սուրբ Սարգիս օգնական ճերմակ ձիաւոր,  
 Կոռ'նկ, մեր աշխարհէն խապրիկ մը չունի՞ս :

Ղարիպ

## ՏԱՐԱԳԻՐՆ

Ընդ աստեղօք օտար ափանց,  
 Տարագրելոյս չի՛ք բերկրանք .

Լըքեալ հոգւոյս, յոյս Հայրենեաց,  
Դու ես միայն ըստփանք:

Օտար աստղեր լոյս չունին,

Օտար երկիր ինձ մըթին:

Օտար բոյսեր դառն ու անհամ,

Ջրեր պղտոր ու լեղի,

Դաշաք անապատք հովիտք արտեր

Ու պարտէզներն անբերրի:

Օտար ծառեր շուք չունին

Օտար ծագիկք հոտ չունին:

Օտար երկիր երջանկաբեր՝

Ծանր այդ պայման ինձ համար,

Չիւն ձըմեռ են իւր գարուններ,

Չունի երբէք ինձ ամառ:

Օտար երկինք ամպոտ են

Օտար սըրտեր անգութ են:

Օտար թէեւ շընչեմ ես օդ,

Յաւօք սահին իմ օրեր,

Քեզ, Հայաստան սիրակարօտ,

Սիրտըս համայն քեզ նուէր:

Օտարութիւն, դու փուշ ես,

Ա.Ս. Հայրենիք, դու վարդ ես:

### ԵՐԳ ԿԱՐՆՈՅ

Չայնը հիշեց էրզրումի հայոց լեռներէն,

Թունդ Թունդ ելան հայոց սրտեր զէնքի  
չարթումէն:

Հայ գիւղացին դարուց ի վեր սուր զէնք չէր  
տեսած

Գաշաը թողուց սուր հրացան բահի տեղ ա-  
ռած:

Քնքոյշ կեանքը ծանր է թվում հայ օրիորդին  
Չէն ի ձեռին սիրտ է տալիս հայոց բաջերին:

Հայ տիկինը ստիպում էր ամուսնոյն գնալ  
Պատերազմի դաշտի վրայ վերք տալ ստանալ:

Հայ ծերուկը ցուպը ձեռին լալով խնդրում է  
Հայրենիքի ազատութիւն տեսնել ու մեռնիլ:

Ուրախացաւ մայր Հայաստան ելաւ կանգնեցաւ,  
Հինգ վեց դարու սուգ տառապանք մի քիչ  
մեղմացաւ:

### ԵՐԳ ՄՈՆԹՈՆԻ

Ընկերք յաղթութեան ժամն է արդ հասեր,  
Մեզ կըսպասեն փոռք, առնունք քաջալեր -  
Արեան ծարաւի մեր հատու սուրեր,  
Կենաց թշնամւոյն թող կըտրեն թելեր,  
Ո՛հ մեր ախոյեան թողին ի տագնապ,  
Չըլանք ահաբեկ մենք ի զէն ըշտապ,

Փուլթանք արշաւել, այր՝ մի՛ վեհերոտ .  
 Մի՛, օն անդր ի բաց՝ սիրտք վոտք և երկչոտ ,  
 ի զէն ի զէն, օն անդր ի բաց՝  
 Սիրտք վատ և երկչոտ :

### ԶՈՆ ԽՐԻՄԵԱՆ ՀԱՅՐԻԿԻ

Եկել է գարուն սոխակը սիրուն,  
 վարդի թփի տակ, Հայրիկ ճան, երգէ  
 Հայրենիք  
 Քաշում են աստեղք բուրաստան ծաղկանց,  
 Աիրով տեղի աուր, Հայրիկ ճան, արցունքդ  
 Հայրենեաց :

Ծիծեռնակ, բազէ, թռչունք համօրէն,  
 Քաշում են միշտ ա՛խ . Հայրիկ ճան, օտա-  
 բաց երկրէն :

Կռունկ մեր պանդուխտ իւր բարձր դիրքով,  
 Փուլթա ձայն տալ մեզ, Հայրիկ ճան, Հայ-  
 րենեաց սիրով :

Վասպուրականի երիտասարդներ  
 Եւ օջիորդներ, Հայրիկ ճան, սեւեր են  
 հագեր :

Պատանի մանկունք, օրիորդ կուսանք,  
 Հայրիկ կանչելով, Հայրիկ ճան, քաշեն  
 հառաչանք

Մեր սիրան ու հոգին քու հոգւոյդ զուր  
 պան,  
 Հրեշտակ Հայ ազգիս, Հայրիկ ճան, դար-  
 ձիր դէպ ի վան

Մեր սիրտն ու հոգին դու յորմօքեցիր,  
 Քաղցր և անուշիկ, Հայրիկ ճան, թողիր  
 գնացիր :

Հրաժարական քարոզդ տուիր,  
 Խեղճուկ սրտերուս, Հայրիկ ճան, կրակ  
 վառեցիր :

Իսկ երկու շաբթի որ օրն էր աւագ,  
 ի սուրբ Յակոբէն, Հայրիկ ճան, դառնա-  
 յիր արագ :

Ուր որ ալ երթաս ուր որ ալ լինիս,  
 Քու փայլուն ջահէդ, Հայրիկ ճան, մեզի  
 լոյս կուտաս :

### ՈՂԲ

Հայրենիքի մէջ մեր եղբարք կողբան,  
 Հերիք ալ Հայեր դիմենք առ Սուլթան,  
 Մէկդի ղեննք լաց, գրիչ ու փետուր,  
 Չեռքերնիս առնենք հրացան և սուր :

Հայաստանի մէջ նոր ասպատակներ  
 Նահատակուեցան Հայ դրօշի ներքեւ,

Կէցցէ՛ Հայաստան, կեցցէ՛ Հայաստան,  
Թող սատկի Սուլթան և Սայիտ փաշան

Օրինակ առնենք պուկարի ազգէն,  
Մենք ալ կ'ազատուինք վատ թուրքին ձեռքէն  
Կեցցէ՛ Հայաստան, կեցցէ՛ Հայաստան,  
Թող սատկի Սուլթան և Սայիտ փաշան:

### ՀԱՅԿ—ԵՐԳ.

Օն եկայք արի Հայեր  
Յիշեսցուք ըզնախնիս մեր.  
Միաբան ելցուք ի վեր—  
Յիշելով զարին Հայկ:

Հայր մեր Հայկ էր դիցազուն,  
Եղիցուք նըմին հանգոյն.  
Ազգ մեր փոքրիկ այլ քաջազուն  
Է մեր քաջ ազգըս Հայք:

Հայկ երեք հարիւր հոգևով  
Միասիրտ որդևով, թողնով  
Ջոկեց մեզ Հայ անունով.  
Պարծանք մեր դու Հայկ:

Գերեզմանք կոչի դաշտն այն,  
Ուր Բէլըն անբարտաւան  
Եւ զօրքն իւր անկան կործան  
Ի բազկաց բոց, ո՛վ Հայկ:

Արդ՝ պընդեալ բշիրտս մեր,  
Հայաստան որ է յաւեր՛  
Սիրեսցուք ի փառս մեր,  
Գոչելով «փա՛ռք մեր Հայկ»:

### ԵՐԳ ՎԱՐԴՄՆԱՅ

Թէ հայրենեաց պսակագիր,  
Գողարիկ քնար լսեր են,  
Երկնից թող գայ անմահ հոգին,  
Հայոց քաջեր պըսակել:

Մասեաց զագաթ թող գան բազմին,  
Յերկնից գունդ գունդ հրեշտակներ,  
Աստուած իջեր է Հայաստան  
Հայոց արիւն հօտոտել:

Եւ կր ծի ու կը ծաղկի,  
Այս դաշտին մէջ ոչ խոտ վարդ,  
Այլ վարդանայ ինկած երկիր,  
Պիտի ծաղկի Սուրբ հաւատք:

Փախէք ամպեր Շաւարշանէն,  
Սլլ մի՛ ցողէք ձեր ցողեր,  
Շաւարշանք ոռոգուած է  
Հայոց քաջաց արիւնով:

Քանդակագործ քաջ Եղիշէ,  
Գրիչն ի ձեռին կայ արտաքս,

Չափէ , ձեւէ , գրէ , դրօշմէ ,  
կեանք , յաճ , հաւատք վարդանայ :

Ախ վարդանայ անուան արժան ,  
Մասիս կանգնի յաճարձան ,  
Մենաստանի խաչ մի գմբէթ ,  
Աւետարան Սուրբ Տաճար :

### ՄԵԾՆ ՎԱՐԴԱՆԻ ԵՐԳԸ

Հիմի է՛լ լըռենք , եղբարք , հիմի՞ էլ ,  
Երբ մեր թշնամին իւր սուրն է գրբել ,  
Իր օրհասական սուրբ մեր կըրժին ,  
Ականջ չի գընում մեր լաց ու կոժին .  
Ասացէ՛ք , եղբարք , Հայեր , ի՞նչ անենք ,  
Հիմի է՛լ լըռենք :

Հիմի է՛լ լըռենք , երբ մեր թըշնամին  
Գաւով , հրապուրքով տիրեց մեր երկրին .  
Ձընջեց աշխարհքից Հայկայ անունը ,  
Հիմքից կործանեց Թորգոմայ տունը .  
Խըլեց մեզանից թագ , և՛ խօսք և՛ գէնք ,  
Հիմի է՛լ լըռենք :

Հիմի է՛լ լըռենք . երբ մեր թըշնամին  
Խըլեց մեր սուրբ—պաշտպան մեր անձին .  
Մշակի ձեռքիցն էլ խոփը խլեց ,  
Այդ սուր ու խոփից մեր շրղթան կրուեց .  
Վայ մեզ , շըղթայով կապած գիրի ենք ,  
Հիմի է՛լ լըռենք :

Հիմի է՛լ լըռենք , երբ մեր թըշնամին՝  
Սոսկալի զէնքը բըռնած մեր գըլխին ,  
Կուլ տալ է տալիս արտասունք առատ ,  
Աղէխարշ բողոք վարուց ապիրատ .  
Մեր գըլուխը լալու եփրատ ո՞ւր պըտուենք ,  
Հիմի է՛լ լըռենք :

Հիմի է՛լ լըռենք , երբ մեր թըշնամին  
Լիրբ գոռողութեամբ լըցրած իր հոգին ,  
Արդարութեան ձայնն հանած իր սրբոցից ,  
Արտաքսում է մեզ մեր բընիկ երկրից .  
Պանդո՛ւխտ , հալածեա՛լ , եղբարք , ո՞ւր գիմենք ,  
Հիմի է՛լ լըռենք :

Հիմի է՛լ լըռենք , երբ մեր թըշնամին  
Անգոհ՝ մեր բերած ծանրը զօհերին ,  
Իւր լիրբ , նրդոված ձեռքը կարկանդ ,  
Ազգութեանս վերջին կապը պատառեց .  
Հայի կորուստը յօտ է , ի՞նչ անենք ,  
Հիմի է՛լ լըռենք :

Հիմի է՛լ լըռենք , երբ մեր թըշնամին  
Արհամարհելով մեր փառքն ազգային ,  
Մեր Եկեղեցւոյն ձեռնամերձ եղաւ ,  
Գայլազգեստ գառին մեզ գըլուխ դըրաւ .  
Սուրբ խորան չունինք , արդ ո՞ւր աղօթենք ,  
Հիմի է՛լ լըռենք :

Հիմի է՛լ լըռենք , մարդիկ ի՞նչ կ'ասեն ,  
Երբ մեր տեղ քարինք , ապառաժք խօսեն .

Չե՞ն ասիլ որ Հայք արժանի էին ,  
Այդ ըստըրկական անարգ վիճակին .  
Մեր սուրբ քաջ նախնեաց գործերը գիտենք ,  
Հիմի է՞լ լըռենք :

Թո՛ւ լըռէ մունջը , անգամալոյժը ,  
Կամ՝ որոց քայցր է թըշնամու լուծը .  
Բայց մենք , որ ունինք հոգի և սիրտ քաջ .  
Ե՛կ անվախ ելնենք թըշնամու առաջ .  
Գոնէ մեր վառքը մահով յետ խրիենք ,  
Ու այնպէ՛ս լըռենք :  
Ու Տ.—Գ. Պատկանեաւս

### ԵՐԳ ՍԱԹԵՆԻԿԻՆ

Ուրո մուր կուրն է գալիս  
Կովկաս սարերէն .  
Մի աննման ձայն է տալիս  
Է՛ն միւս ափերէն :

Հայոց զօրքեր քաջ, վար գրէք  
Չէնքեր ձեր ձեռքերէն .  
Սաթենիկն եմ կը յաղթուիք  
Իմ սեւ սեւ յօնքերէն :

Որ մի պահէք վրէժ մի լուծէք  
Իմ Ալաններէն .  
Բարձր է կովկաս քաջ են Ալանք  
Մասեաց քաջերէն :

Քեզ ասու՛մ եմ քաջդ Արտաշէս  
Դուրս եկ վրանէն .  
Սաթենիկն եմ , կը յաղթուիս  
Իմ քնքուշ մազերէն :

Լոյսեր ցոլեց , արեւ ծագեց  
Մասեաց սարերէն ,  
Սաթենիկն եմ կը յաղթուիս  
Իմ կարմիր այտերէն :

Ալան , Ալան թագ ու պսակս  
Տարար իմ գլխին ,  
Ոնց գիմանամ հալու՛մ է սիրտս ,  
Քո չար ծարաւէն .

Ալան , Ալան զիս յաղթեցիր  
Գալով հարաւէն .  
Ոնց գիմանամ , մաշու՛մ է սուրս  
Քո չար կրակէն :

Հազար կուտամ տասն հազար  
Իմ անթիւ գանձերէն .  
Քեզ կ'առնու՛մ հարս թագուհի  
Քո Ալաններէն :

Ոսկի տեղայ քո հարսնութեան  
Մասեաց սարերէն  
Ծածկուի գեղմ ընծայաբեր  
Բարձր ուղտերէն :

Չ. Չարեհեաւս

ՀԱՅ ՔԱՂՈՐԴԻ

Ապառաժստ լերան մը կող  
Յեցեալ ի քար դերեզմանի ,  
Աչք մերթ յերկիսս և մերթ ի հող  
Խարտիչագեց կայր պատանի .

Ո՛վ դու որդի լերանց հովտաց  
Ինչո՞ւ այդպէս սիրտդ է ցաւած :

Կուզե՞ս որ մեծ փոթորկեալ ծով  
Մատուցանէ քեզ մխիթար

Կոհակաշարժ իւր լարերով  
Երգեալ ի շունչ մըրըրկավար .

Ո՛վ դու որդիդ լերանց հովտաց  
Ինչո՞ւ այդպէս սիրտդ է ցաւած :

Կուզե՞ս որ քեզ ահեղաշուք  
Խնդայ կոմարն աստեղց անթիւ ,  
Եւ բընութիւն պայծառ զարդուք  
Ժրպտի ծաղկամբ և զեփուբ .

Ո՛վ դու որդիդ լերանց հովտաց  
Ինչո՞ւ այդպէս սիրտդ է ցաւած :

Կամ փոփկագոյն այլ բսփոփանք  
Միթէ կուզե՞ս մօր բաղցունի  
Ու սիրուհւոյ անուշ գգուանք  
Որ քու կսկիծրդ փարատի  
Գեռ ի՞նչ կուզես , ո՛հ մի՛ ծածկեր . . .

— Կուզե՛մ փառօդ և գնդակներ :  
Մ. Պէշիկըրաշեան

ԹԱՂՈՒՄՆ ՔԱՂՈՐԴԻՈՅՆ

Ոչ փող զարկինք ոչ արձագանք լեռնասոյզ  
Սարէ ի սար շարաշըշուկ տարին լուր  
Ու շերգեցինք ողբոց երգեր օրտալոյզ  
Երբ պատանւան բացինք մառլ փոսիս դուռ :

Գիշերական մունջ ստուերներ շուրջ կային  
Երբ հրացանի կոթով ըզհող փորեցինք  
Լուսին միայն դողող շողայր մեր գրլխին  
Սուգ էր պատեր ըզգաշտ բըրուր և երկինք :

Պէտք չէր դագաղ , և ոչ ճերմակ պատանքներ  
Որով գոցուէր ազատորդի բաշորդին ,  
Նա յետ մարտին կարծես հողմս ծ կու հանդչէր  
Ու վերարկուն կարմիր բաւ էր իւր անձին :

Անձայն ու կարճ նշնցելոց մի գրուցեց  
Մեր բաջ Տէրաէրն, զինուոր Հայոց ՎՍտուծոյ ,  
Գոզեց ըզմահն և գքաջութիւնն իւր օրհնեց  
Թոյլ չր տուաւ հառաչ մ'ու ճիչ հանելոյ :

Բայց երբ գրլուխ ի բարձ գըրինք հողաչէն  
Տեսանք բլգեղ ճակատին ու վերքն պայծառ ,  
Ո՛վ պատանեակ , ըսինք ամենքս մէկ բերնէն  
Վասն հայրենեաց մեռար , դու շա՛տ ապրեցար ,

Գնա՛ դրուցէ՛ հայկայ զարմից մեծ որդւոց  
Որ կան այստեղ ազատ ու քաջ դեռ Հայեր ,  
Որոնք ի բիր պատերազմաց թէպէտ խոց  
Մէջ ամպրոպաց ի ժայռ կանգուն են կեցեր . . .

Մէյ մ'ալ քամին յանկարծ փրչեց ցրտաշունչ  
 Լուսնին շողերն եկաւ գոցեց մըթին ամպ  
 Ու մեր սարերն զերթ ուրուականք անմրուունչ  
 Սեւ գլուխնին տնկած գիւտնն ապշուեթեամբ :

Յայնժամ ցուրտ ցուրտ հող լեցուցինք իւր վրան ,  
 Խաչ 'ը դրինք , ինչպէս իւր մօր պատուէր ետ .  
 Ո՛չ այլ շրքեղ արձանագիր ոչ տապան ,  
 Ձինքըն մինակ թողուցինք իւր փառքին հետ :

Մ. Պէշիկպաշեան

### ՀԱՅՈՒՆ ՈՂՔԵՐԳԸ

Թմրած Հայը վարթեցաւ ,  
 Ելաւ քաջի պէս ոտքի ,  
 Բայց մարդասէր Եւրոպան  
 Չուզեց որ Հայն ազատուի :

Թոթոսեց շղթան ամբակուս  
 Բազմադարեան ազազակը ,  
 Սակայն Եւրոպ մնաց լուս ,  
 Չուզեց որ Հայն ազատուի :

Հայն ալ ուզեց մարդկօրէն  
 Ապրիլ դառնալ , տէր բախտին  
 Այլ բռնակայն անօրէն  
 Չուզեց որ Հայն ազատուի :

Բռնութեան կռուին այդ դժխեմ ,  
 Որուն անուն Չար կուչուի ,

Մեր սուրբ դատին կեցաւ դէմ ,  
 Չուզեց որ Հայն ազատուի :

Աշխարհակալ այն ստիս ,  
 Հայու արեան ծարաւի  
 Չմեղ ըրաւ ստնակոխ ,  
 Չուզեց որ Հայն ազատուի :

Սասուն , Պոլիս ամեն տեղ  
 Վազեց արեան հեղեղ  
 Դեռ վեց հզօր պետութիւնք  
 Չուզեն որ Հայն ազատուի :

Հայաստանն է սպանդանոց  
 Եւ կիլիկիան ալ դժօխք ,  
 Դեռ իրաւանց այն դըրժող  
 Չուզեն որ Հայն ազատուի :

Լերինք քարինք ողբացին  
 Հայոց բաղբը եղկելի ,  
 Սակայն իշխողը չուզեցին  
 Որ ստրուկ հայն ազատուի :

Ելաւ Ձէյթուն քաջարի  
 Եւ կռուեցաւ յաղթական  
 Վեց պետութիւնք մէջ մտան  
 Որպէսզի հայն չազատուի :

Արինանիերկ մահիկը  
 Յաղթեց խաչին որ պաշտուի .

Խաչին կուռքը չափցաւ  
Չուզէց որ հայն ազատուի :

Մի քրիստոնէայ վեհափառ,  
Մարդասիրոջ հետ տաճկի,  
Դաչինք կուեց անպատկառ  
Որպէզի հայն չազատուի :

Հայ արեան մէջ լողալով  
Մեր դահիճն սրդ կը հրճուի,  
Եւ կը գոչէ անվրդոյ  
Կոտորենք որ չազատուի :

Բայց այն ստրուկն անարգուած,  
Առիւժ գարձած անվհատ,  
Կը մոնչէ երկանց մէջ :  
Պէտք է լինի հայն ազատ :

Մնդութ դահիճ դու գիտցիր՝  
Թէ հայն մնաց անվտանգ,  
Թէպէտ տաս, ջարդ կ'օտորած,  
Պէտք է լինի հայն ազատ :

Թէ բանտ, երկաթ, կառափնատ,  
Սպառնայ, հայեր հարազատ,  
Չըլան երբէք յուսահատ,  
Մինչեւ լինի հայն ազատ :

Դիւանագէտք անամօթ,  
Որ անարգէք մեր զանգաւ,

Չեր աչք քնոյ մնայ կարօտ :  
Յորչափ չըլլայ հայն ազատ :

Գիշեր է մեզ յառաւօտ,  
Չեր հաշիւներ ցնդին յօդ,  
Բայց կը յազմէ արդար դատ  
Եւ կը լինի հայն ազատ :

Հայ սղոյն ունի մի նպատակ,  
Մէկ ուխտ, մէկ յօյս, մէկ հաւատ -  
Կամ ամէնքս նահատակ,  
Կամ հայն լինի ազատ :

### ԼԵԻՈՆ 2 Ի ՓԱՐԻՉ

ԻՒՐ ԿՈՐՈՒՍԵՍԼ ԳՍ.ՆԸ ԿՈՂՅԱՅ

Մտաւ արեւ երջանկուժեան զլխիս պատեց  
մուժ, զլխիս պատեց մուժ,  
Քաղցրիկ օրերս, պայծառ ժամերս ինչպէս  
անցան շուտ.

ինչպէս անցան շուտ

Գիշեր ցարեկ կը հառաչեմ չկայ ինձ օգուտ  
չկայ ինձ օգուտ,

Ես իմ ցաւերս ես իմ վշտերս որո՞ւ

ես պատմեմ

որո՞ւ ես պատմեմ

Աշխարհ ինձի աւերակ է մինչ գահէս զուրկ եմ  
մինչ թաղէս զուրկ եմ :

Ո՛հ հայրենիք իմ անտէրունջ ցաւոց մէջ հեծէ  
ցաւոց մէջ հեծէ ,

Միթէ սիրտս ապառա՞ժ է որ չհառաչէ  
որ չհառաչէ

Իւր հայրենիք, պալատ, զինուորք ինչպէ՞ս չյիշէ,  
ի՞նչպէս չյիշէ՛ :

Ես իմ ցաւերս ես իմ վշտերս որո՞ւ ես պատմեմ  
որո՞ւ ես պատմեմ ,

Աշխարհ ինձի աւերակ է մինչ գահէս զուրկ եմ,  
մինչ թագէս զուրկ եմ :

Ամիս է դար, օրըս տարի, ո՞հ ժամերս ամիս  
ո՞հ ժամերս ամիս

Սէր Կիլիկիոյ անտէր գահոյս լալով գոչէ զիս  
լալով գոչէ զիս ,

Եգիպտացիք ազգ խուժադուժ քանդեն հայրենիքս  
քանդեն հայրենիքս

Ես իմ ցաւերս ես իմ վշտերս Բարիդ քիչ պատմեմ  
Բարիդ քիչ պատմեմ

Դու ալ իձ աւերակ ես մինչ գահէս զուրկ եմ  
մինչ թագէս զուրկ եմ :

### ԶԵՅԹՈՂԻՆՑԻՈՅ ՈՒԽՏԸ

Ազատութեան քաջ զինուորին

համար ի՞նչ կայ այլ սփոփանք

Թէ ոչ՝ տեսնել հայրենիքին՝

Մի օր լուծուած կապն ու կապանք :

Մենք Զէյթունցիքս վաղուց արդէն  
կազմ ու պատրաստ ուխտած էինք  
Մեր արիւնով Հայու ճակտէն  
Սրբել ամօթն ու նախատինք :

Այս սրբազան ուխտին վսեմ  
‘Իրժե՛լ, երբէ՛ք մենք չեմք զիտեր  
Դու՛ բարբարոս, շարէ մեզ դէմ  
Գու ահագին զօրացդ վշտեր :

Մենք անդադար հպարտ սրտով  
Յետ կը մզննք ցած թշնամի  
Մեր ձեռքին տակ ողջ պահելով  
Արիւնարբու զօրքերդ զերի ,

Ի՞նչ փոյթ թէ դու գայլի նման  
կատղած հանես բերնէդ փրփուր  
Գո թնդանօթն ու հրացան  
Թող մեզ բերեն շանթ , բոց և հուր :

Գեղ հեգնօրէն պիտի տամք ցոյց  
Թէ քո ցասմանդ ժայթքող բոցեր  
Չե՛ն չե՛ն կարող մի վառ հընոց  
Մեր կուրծքին տակ իսպառ մարել :

Ղարիպ—Ղոռպէր

### ՅԵՂԱՓՈԽԱԿԱՆԸ

Կեանք մ՛ունէի մահուան ենթակա ,

Որ ուչ կամ կանուխ պիտի սպառէր

Իսկ զայն փրկութեան սեղանին վրայ  
Դնելու սէրս օր քան զօր կաճէր :

Վերջապէս հասաւ վայրկեանը յօրում  
Այ պէտք էր վերջ տալ իմ ներքին կռույն  
Թողլով սիրելիքս թշուառ ու տրտում  
Այտ անդ թափառիլ ման գալ ծածկանուն :

Փշոտ է ուղիս այլ միշտ հստաւէտ  
Ծագկանց բուրումն ալ ունի իր փուշեր  
Ծանր է ուխտս սակայն փրկաւէտ  
Կեանքի մը յոյսն է ինձի քաջալեր :

Հալածանք , բանտ , մահ , բոլորդ ինձ համար  
Իմ այս նոր կեանքին պարզ նկարներն էք  
Ինչքան էլ սաստիկ ըլլան ձեր տանջանք  
Բնաւ զղման բառ մ'ինձմէ չ'սպասէք :

Զըլլայ որ յաճախ արիւնոտ սրտիս  
Դու անյաջ երկաթ տալով նոր խոցեր  
Կամենաս փորձել ընկճելու հոգիս  
Նա վառ բոցերու հնոց մ'է դարձեր :

Դու սլ , ո՛վ անգութ ժանգոտած շղթայ  
Մի այգեքան , ի զո՛ւր , շառսչեր ուժգին  
Զի կոշտ օղակներդ միայն կարող են  
Ճկել հէգ մարմինս այլ ոչ իմ հոգին :

Իսկ դու կախաղան . ո՛րքեզ կը ճանչեմ  
Մահուան ցորտ սարսուռ մ' ունիս ինձ տալու

Բայց մի՛ շտապեր , ես միշտ քուկըդ եմ  
Ունիմ շատ պարտքեր , դեռ կատարելու :

Ղարիպ--Ղուրպէր

### ԵՐԳ

Թող կորնչին տաճիկ՝ երը  
Հայաստանի Սուրբ հողից ,  
Իսլամական անարգ լուծը  
Ջնջուի Հայաստանից :

Բաւական է որքան նոքա  
Հայու արիւն ձծեցին ,  
Հայու ջանքով աշխատանքով  
Պետութիւն պաշտպանեցին :

Հայու հացը , Հայու փղը  
Մինչեւ ե՞րբ իսլամն ուտէ ,  
Իւր գարշելի պիղծ բերանով  
Հայութիւնն անարգէ :

Վրիժուց կայծակ թող բորբոքի  
Հայ առիւժների սրտում ,  
Թաղել իսլամի գլուխը  
Դիցազունների երկրում :

Սրով սբի դէմ մարանչիլ  
Սրեան դէմ արիւն հանել ,  
Իւր մէկ հաւր գողացողին  
Սմբողջ տունը թալանել :

Աչքի տեղ աչքեր հանել  
 Ատափի տեղ ատամներ ,  
 Միտի հարուածի փոխանակ  
 Ա՛՛բողջ ազգը կոտորել :

Այս անխիղճ անօրէն դարում  
 Սյուց վրայ յոյս դնել ,  
 Նշանակում է յաւիտեան  
 կեանքիցը հրաժարել :

### ՀԱՅ ՄԵՌՆԻՆՔ

Ո՛չ եղբարք , ո՛չ , օտարներէն չ՛կայ յոյս  
 Մի՛ աչքերնիդ , մի՛ դարձրնէք յայս յանկոյս  
 Օտարն զձեզ թէեւ սիրէ հիւրաբար ,  
 Օտարն՝ ա՛հ , միշտ է օտար :

Օտարը ձեր վիշտ կը դիտէ անգորով ,  
 Ի՞նչ փայթն որ դուք թափէք արցունք արիւնով ,  
 Ով որ Հայ չէ , Հայուն ցաւեր նա չ՛զգար ,  
 Ի՞նչ կը խաբուիք անդադար :

Մի՛ դուք , ձեր յոյս մի՛ աւանդէք օտարին ,  
 Մի՛ խոր վէրքերդ ցուցանէք անգուլթին .  
 Արգահատա՞նս կը յուսայք , օգնութի՞ւն ,  
 Ձեր կը ծաղրեն մերկուլթիւն :

Գիտե՛մ , ձեր բեռը ծա՛ր է , ծանր ո՛վ Հայեր ,  
 Բայց կը կարծէ՞ք զայն վերցնեն օտարներ ,

Թողէ՛ք օտար , տուէ՛ք եղբայր եղբօր թեւ  
 Եւ զօրացէ՛ք անդեդեւ :

Բաղդը դարձեր է ձեզի դէմ թշնամի ,  
 Մի՛ վհատիք , ցուցուցէք սիրտ հայերի ,  
 Ձէ կարող բաղդ յաղթել ապգին այն քաջի  
 Որ բաղդին դէմ կը կըռվի :

Ձեր հայրերուն ոչ չլթայք ոչ սուսերներ  
 Ձկարացին ընկճել ոչ միտք , ոչ սրտեր .  
 Ինչո՞ւ ձեր սիրտ այսօր դողայ տկար , հէք ,  
 Ի՞նչու , այն քաջաց որդիք չէ՞ք :

Ձէ՞ք դուք որդիք այն դիցազանց աննման ,  
 Որ Հայրենեաց ճնճերեցան ի սեղան .  
 Ձէ՞ք դուք որդիք , այն մեծ Հայոց՝ որոց կեանք  
 Են մարդկու թեան իսկ պարձանք :

Դուք որ ունիք ձեզ պատմութիւն մ՛ ազգային ,  
 Որոյ վերայ մեծ աղգեր իսկ նախանձին .  
 Ինչո՞ւ այսօր մոռցած զանցեալ ձեր փառաց :  
 Երանի տալք օտարաց :

Օ՛ն . ով կ՛զգայ ի սիրտ եռանդ և ոգի ,  
 Թողու զօտար և իւր նախնեաց հետեւի .  
 Մեր կեանքն հոն է , ուր կրօնից մեր սեղան ,  
 Այն է Հայոց վառարան :

Եղբա՛րք , Հայուն կեանքը երբէք չմարիր ,  
 Երկինք լեցուն են այն բոցով կենսաձիր .

Որչափ տիրէ մշտայազթ խաչ Քրիստոսի,  
Հայն ալ անոր հետ կ'ապրի:

Ի՞նչ կը վախնաք... զլուխնուդ վեր չէ՞ք տեսներ  
Քառաթեւին դիւսասարսուռ վեհ ստուեր:

Ձայն Սուրբ Փայտին բուն շաղեցին ձեր հարքը  
Իրենց վսեմ արեամբը,

Դուք ալ խաչին խարըսխեցէք ձեր յոյսը,  
Եւ հաւատացէ՛ք, պիտի ծագի՛ ձեր յոյսը:  
Նա ազգութեանդ հղու պարիսպ ամրափակ,  
Նա ձեր ըլլայ գէնք, դրօշակ:

Ո՛չ, հնար չէ՛, որ կորսուի այն ազգը,  
Որ հաւատարիմ մնաց խաչին միշտ ստքը.  
Նորա կեանքը պիտի տեւէ այնչափ դար,  
Որչափ կրօնից կեանք յաշխարհ:

Այն վեհ կրօնից և ազգութեան անունով  
Հա՛յ եղբարք, ձեռք ձեռքի տուէք հուր սիրով,  
Ատելութիւն: քէն, մերժուին օ՛ն, ի բաց,  
Անիծեցէք զազգատեաց:

Ամենուդ սիրտ զգայ նոյն սէրն Հայրենեաց,  
Ամենուդ սիրտ թաշի յօգուտ համազգեաց,  
Ու ձեր յետին եղբօր արցունք ու ցաւ միշտ  
Ձգացէք ձեր իբրեւ վիշտ:

Օտարին հաց մեզի սնունդ չէ բնաւ,  
Օտարին շուր, ո՛չ, չմարեր մեր ծարաւ:

Մեզի կենաց արևոյ, և մեր պահապան  
Է աւազանն Հայկական:

Այն աւազան, այն Հայութեան կնքատուն  
Ո՛հ, շուրանանք եղբարք յուսով զազգիազրուն,  
Եւ թէ մեր շունչ պիտի մարի վերջապէս,  
Թող մտրի յայն Սուրբ կըրկէս:

Թող ամենքս ալ ընդունի նոյն գերեզման,  
Վասն զի նոյնն էր ամենուս ալ օրրան:  
Հայ ծնանք մենք, Հայ ապրինք, Հայ և մեռնինք,  
Օն Հայ մտնենք և լերկինք,  
Խորէն Եպիսկոպոս Նար—Պէյ

### ԱՌ՝ ՍԷՐ ԻՄ ՀԱՅԱՍՏԱՆ

Օտար երկիր թափառած,  
Մնքուն աչօք կամ ցաւած,  
Իմ սիրելոյս կարօտցած,  
Չըկայ մէկն որ կարեկից  
Ըլլայ ցաւած իմ սըրտիս:

Ո՛վ Հայրենիք իմ սիրուն,  
Ա՛հ, տուրէ զիս անունդ.  
Արդեօք պիտի չը տեսնե՞մ  
Քու լուսափայլ զուարթ դէմքդ:

Հառաչանք բիւր ի սըրտէս,  
Արտօսը հեղուժ աչերէս,

Չեն ինձ երբէք մըխիթար ,  
Ոսկի , պատիւ . սէր օտար :

Այլ ես անոր սիրոյն զոհ ,  
Կընեմ զամէնք սրբտով զոհ ,  
Միայն թէ յոյս մ' ունենամ ,  
Իմ սէրս տեսնել միանգամ :

Ս. Պ. Պ. Փարիսագեան

### ԻՂԾ ԱՌ ՀԱՅԱՍՏԱՆ

Ուր ընկալ ի գիրկս , մայրըդ հայաստան  
Չորդիս քս սիրուն ցըրուեալ աստ և անդ  
Տե՛ս , ի՞նչպէս սիրովդ և քու կարտովդ  
Վառուած բորբոքած՝ քու տեսոյդ ցանկան :

Յորդորակ

Արի՛ կաց ուրեմն , ով մայր Հայաստան ,  
Նոր ոչի զգեցիր փառօք անվախճան :

Օն զրահաւորիմք , ով որդիք Հայկեան ,  
Մեր ձօր արցունքներն շնջել յաւիտեան .  
Չօրանանք սիրով և սուրբ միութեան ,  
Ընդդէմ թշնամեաց ըլլանք ախոյեան :

Յորդորակ

Հապա գործելու ժամանակն հասաւ ,  
Հայրենասէրին կայ փառք անզըրաւ :

Ս. Պ. Պ. Փարիսագեան

### ԵՐԳ ՄԱՐՏԻ

Մնացես բարեաւ սէր իմ , սէր ,  
Հրաւէր մարտին որոտաց  
Թէ չեմ քաջաց ես ընկեր ,  
Չըկայ բաժին ինձ փառաց :

Մի՛ լար , հոգւոյս իմ հատոր ,  
Գուցէ դառնամ , ո՛հ , մի լար ,  
Թ՛անկայց մարտին ես ի գոռ ,  
Տե՛պուք յերկինս մեք զիրեար :

Եղբայրադաւ չէ նախանձ  
Որ բորբոքեալ յիս վառի ,  
Ի սուրբ հողոյ Հայրենեաց  
Բառնամ ըզլուծ օտարի :

(Թարգմ. յիտալ) Մ. Պեշիկպաշեան

### ՎՐԷԺ Ի ՇԱԽԱՐՇԱԿԱՆ ԴԱՇՏԻՆ

Բա՛մբ որոտան բարձուտ բոմբիւնք յԱյրա-  
րատեան դաշտն ի վայր ,  
Արի արանց արիւնք յեռանդն առատանան հրա-  
զայր ,

Հրաւէր հայրենեաց հռչակի՛ նդհանուր ,  
Հոգիք Հայկազանց բորբոքին ի հուր .  
Որք երկնաւորին պսակին էք կարօտ ,  
Որք երկրաւորին փառոց երկնայորդ ,

Հապ'օն , արի արանց մանկունք ,  
 Հայրենավրէժքըդ Հայկազունք ,  
 Հապ'օն , ի զէն գունդազունդ ,  
 Յեռեալ ի պար թունդ ի թունդ  
 Ի զէն , ի վրէ՛ժ , օն անդր յառաջ ,  
 Ի զէն , ի վրէժ , մի ձախ , մի յաջ  
 Օն անդր յառաջ  
 Մի ձախ մի յաջ  
 Օն անդր յառաջ  
 Յառաջ յառաջ  
 Հապ'օն յառաջ :

Հայկեան փանդոանց որտընդոտ դանչեն բար-  
 բառք մարտագոռ  
 Դառնագոռոջ անդրաձայնէ Պարսիկ կերկեր  
 ի շեփոր .  
 Եարժեն հրեշտակք թեւ ըս լուսադուրդուս ,  
 Ճիւղադ ճուճողաց կայտունն ի դրժոխս .  
 Եռինդրն շանթառաք զեթերօք փարի ,  
 Սարսափին սանդարք ի խօյ խաւարի :  
 Հապ'օն արի արանց մանկունք , եւն :  
 Մամիկոնեան սոււառնեցաւ դրօշն յայերս գոգ  
 ծալ ի ծալ ,  
 Ի ճակատուց ի թրչնամեաց սա ոչ գիտաց յու-  
 բատ կալ ,  
 Հեծեալ հրանժոյգ վեհին վահանայ՝  
 Վրէ՛ժ կանչէ արեան կարմիր վարդանայ .  
 Փռնչեալ բոցաշունչ դափր ի գարշապար :

Ի հազմաժուտ վարդի յանժոյժ երիվար :  
 Հապ'օն , արիարանց մանկունք եւն :  
 Ի գուպարել մարտայարդար գարշապարաց  
 Արամայ ,  
 Գոռան կորգրիք , Մասիք սարսին , հռնչեն  
 սահանք Երասխայ :  
 Ի գրոհ ի գրոհ տալ բիրուցն ոտնատրոփ ,  
 Տատանին դաշնակք՝ յառնէ շոինդն ապշոպ  
 կուսի առ կուսի կոփին կըմբայք տէգ առ տէգ ,  
 Դորդ առնուն տարերք՝ կորովեացն ի վէգ  
 Հապ'օն , արի արանց մանկունք եւն :

Արիք ի կուր քաջակորովքը բնդ կորակոր հը-  
 բոսն Արեաց .  
 Հապ'օն համհարզք մեր բիրայազթք , ձեզ նոր  
 հանդէսք են փառաց .  
 Թուիք ի ապժ ի խազժ , առէք զլն և զարդ ,  
 Երեանիք յընիք հարու բիւրս հաղարս .  
 Ի սուր ի սուտեր , կարչնեղ յայեղունս՝  
 Ըզ սեաւ Սասնեանց ջարդել կսուսիունս .  
 Հապ'օն արի արանց մանկունք եւն :  
 Մինչեւ ցե՛րբ , ցե՛րբ սուգ ունի զՀայս , հասէ՛ք  
 զարտօսր , որքք այրիք ,  
 Հարանց՝ հարսանց՝ հղբարց՝ որդուց , հանուրց  
 Հայոց վրէ՛ժխընդիրք .  
 Թինգս առեալ երթամք յասպարէզ քաջաց ,  
 Յերկնից հընչեն ձայնք արեան սիրելեաց .

Սօսափիւնք վերինք՝ արհաւիրք յերկրէ  
Քաջացս օժանդակ՝ զգարս հերքեսցէ՛ս,  
Հապ՛օն, արի արանց մանկունք, եւն՛ :

Օ՛ն անդր ի բաց հայկեան հողոյ հըսկայազանց  
Եւ սըրբոց  
Ի բաց ջրիւր շուառական մոխրապաշտիցըն՝  
պըղծոց .

Դաշաք մեր մերժեսցեն զոսկրոտին անգամ,  
Արիւնք վըկայից զճապաղին անժամ .  
Ոտն ընդ դիս տոռնեալ դարձցին ի փախուստ  
Մասնակուրժը ընդ Հայս հայեսցին հեռուստ  
Հապ՛օն, արի արանց մանկունք, եւն՛ :

Արք աղեղանց, բարձր ի թիբախ թռուշիք՝  
վերջին ձեզ խրատոյս  
Առեալ տարցուք զանթիկնադարձ զայս վարդա-  
գոյն դբօշ անխոյս .

Ի վերայ յիտից յազթից վարդանայ,  
Պարսկափան բազկաւ արւոյն վահանայ  
Շեշտ ի ծայր շիրմի դաշտին Շաւարշան  
Տընկե յազթանակ անժահ Հայուժեան .  
Հապ՛օն, արի արանց մանկունք, եւն՛ :

Հ. Ղ. Վ. Առիշան

ԱՌ ՄԱՅՐՆ ՀԱՅԱՍՏԱՆ

Երկիր քաջաղանց, քանի՛ սուգ աչեր,  
Ցօղեցին լալեօք քու բողբոսիկ հողեր .

Քանի՛ լուս հառաչք սըրտից խորեղէն,  
Անձկաւ քեզ թըռան օտարաց երկրէն :

Դառն է, ո՛հ, զաւկայ մօր գրրկէ կորզիլ,  
Եւ դառնագոյն՝ մօր անլուակ ծիւրիլ .  
Այլ այն ձեռք որ քեզ տապալեց դահէդ,  
Կարող է գըթով կանգնել անկումէդ :

Քամեցիր լըռիկ իսպառ դռն բաժակ,  
Լրացաւ երկնից կէտ ցամառ վըրթակ .  
Տե՛ս սիրուն որդիքդ ձեռք ձեռքի տուած՝  
Գնան յառաջորայլ ուժով օրինաց :

Համայր սուրբ ի շուրթն, սէր վառ ի սըրտի,  
Դիմեն սփոփել քեզ ոչ յուսով սնտախ,  
Թէ սոյն ձեռքն որ քեզ տապալեց դահէդ,  
Կարող է գըթով կանգնել անկումէդ .  
Թ. Նապարեան

Ի ՀԱՍ ՏԱՏՈՒԹԻՒՆ, ՍԱՀՄԱՆԱԴՐՈՒԹԵԱՆ

Արի՛ք Հայկազունք, յառաջ ընթանանք .  
Սահմանադրութեան նոր բարեւ մ՛ ալ տանք,  
Որ ազգն երբ զանի փրկարար կոչեց,  
Նոր հօգի, նոր կեանք անոր պարգեւեց .  
Եկէք, բարեկամք, առ բարձրեալն Աստուած  
Ուղղեմք մեր մազթանք սուրբ սըրտէ բխած  
Կեցցէ՛ կեցցէ՛, կեցցէ՛ միշտ  
Ազգն ու Սահմանադրութիւն :

Ջրրկանք, բռնութիւն վատթար վարչութեան,  
Բերին մահն ի դուռն հայոց ազգութեան.

Սահմանադրութիւնն եկաւ զայն վանեց,  
Եւ կենաց ուզին մեր առջեւ հարթեց.

Յառաջդիմութեան բացաւ ասպարէզ,  
Որ ամեն վայրկեան գոչել պարտ է մեզ.  
Կեցցէ՛, կեցցէ՛, կեցցէ՛ միշտ, եւն:

Ջրնջեց ամենայն կարծիք անձնական,  
Խեղճեց ամենայն ձայն անհատական.

Հրբուէր կարգաց Աստուծոյ ձայնին,  
Առաջորդ իննել գործոց ազգային:

Այն որ Աստուծոյ ձայն տուաւ մեզի,  
Մինէ թող առնու ձայնով մ' այնպիսի.  
Կեցցէ՛, կեցցէ՛, կեցցէ՛ միշտ, եւն:

Հայերս անարգուած գրրկեց բարձրացոյց,  
Մարդկային կոչման մեզ արժանացուց.

Շընորհեց մեզի զոր ալատն Աստուած՝  
Մարդկութեան երկրորդ նըշանն էր դըրած.

Որուն շնորհիւ յարգ ստացանք մենք,  
Անոր յարգ տալով ապրինք ու երգենք.  
Կեցցէ՛, կեցցէ՛, կեցցէ՛ միշտ, եւն:

Դուն ալ, Հայաստան, սիրուն հայրենիք,  
Ալ այսուհետեւ մի սրգար լռիկ.

Ձի ալ քու որդիք նոր ոգւով բերկրեալ,  
Ըզընդ հարս կուզեն տեսնել զարդարեալ:

Ալ մի լար, մայրիկ, լացդ ի պար փոխէ,

Եւ ձայնիւ քաղցրիկ որդւոցդ հեռ երգէ:  
Կեցցէ՛, կեցցէ՛, կեցցէ՛ միշտ, եւն:

Հայե՛ր, միանանք մեր մօրն հեռ օրհնենք  
Չանոնք որ մեզի տունն սուրբ օրէնք.

Սահմանադրութեան բարեաց փոխանակ  
Թող վարին ուրախ ի կեանք փառունակ.

Թող և մեր որդիք հեռ անանց անուան՝  
Բիւրուոր տարիք օրհնեն ու կարգան.  
Կեցցէ՛, կեցցէ՛, կեցցէ՛ միշտ, եւն:

Յ. Գ. Սըվաձեւսէ

Ի ՏՕՆԱՆՄԲՈՒԹԻՒՆ

Տ. ՆԵՐՍԷՍ ՊՍՏՐԻԱՐԻՒ ՎԱՐԺԱՊԵՏԵԱՆ

Ելէք, եղբարք, բոլորուիլու  
Գահին քովեր Հօրրն հայուն,  
Առէք ծաղկունս փունջ կապելու  
Որ զարդարեմք իւր վեճ անուն:

Նա հայր է մեզ ճշմարիտ,  
Որ կը հսկէ անըրթիթ.  
Նա նոր Մովսէս երկնանուէր  
Միշտ կը տքնի անձնուէր,  
Անդէն հանել անվըհատ  
Հայն տառապէն յուսահատ:

Որբին, հէղին և հայրենեաց  
Նա կ'սփոփէ տխուր լալիւն  
Եւ ազգային սուրբ իրաւանց  
Մատաղ կուտայ իւր կեանքն ողջոյն:

Օ՛ն , արդ փռւթամք ի հանդէս,  
Տօնել ըզմեր նոր Ներսէս,  
Որ իւր շորսգին ի ըսփիւռ  
Կանգնէ տաճարս լուսասփիւռ.  
Հոն քաւելու դարաւոր  
Ազգին վշտերն բիւրաւոր :

Որ փրկութեան ազգի միայն  
Ռախտեց ունել նշանաբան ,  
Եւ անխնայ տրքնի ահա  
Հայրենական փառաց վրայ :

Արեան ծովէն փոթորկուն  
Ուր ազգն անկաւ անկայուն  
Նա կերկարէ զիւր բազուկ  
Անկեալ հայուն տալ նեցուկ  
Կեցցէ հայր մեր պատուական  
Կեցցէ Ներսէս սրբազան :

Յ. Չաքրեան

### ԱՆՆՄԱՆ

Կապոյտ երկընքում  
Ասողեր են փայլում  
Այլ և լուսնակը

Ամենից սիրուն

Ամենից փայլուն

է արեգակը

Կանաչ դաշտերում  
Եւ այգիներում  
Ծաղիկներ կան շատ :

Բայց չէ ոչ մինը  
Վարդի նմանը՝  
Նա է բնութեան զարդ :

Սիրուն աղջիկներ  
Ինչպէս ծաղիկներ  
Անն տեղ կան շատ :

Բայց իմ ընտրածը  
Սըրտիս սիրածը  
Հրեշտակի է նման :  
Գ. Բարխուդարեանց

### ԱՌ ՀԱՅԱՍՏԱՆ

Մեր սիրուն վայելչական տեղեր օտարներ են  
առեր

Արի՛ք , եղբարք , ի միասին , դու Դատարան ,  
ո՛ւրտնդ ես :

Ով որ իւր ազգն ուրանայ  
Երկու աչքը կուրանայ  
Յետնեալ աղբատի նըման  
Դունէ ի դուռ մուրանայ :

Ճանապարհու՛մըդ նայելով աչքերու՛մըս լոյս  
չմնաց

Երկնային աստղերու մէջ ես, դու Հայաս-  
տան, ո՞ւր տեղ ես,

Կշտին դպչի գեղարքը  
Փորից թափի լեարդը  
Գետինն անցնի բերր անգամ  
Ազգն ուրացող վատ վարդը:

Քու փափաքով վառուում եմ ես, իմ սիրա-  
կան, ո՞ւր տեղ ես,

Երկնային աստղերու մէջ ես, դու Հայաս.  
տան, ո՞ւր տեղ ես.

Ով որ լւր ազգն ուրանայ  
Երկու աչքը կունանայ  
Յետնեալ աղքատի նըման  
Դռնէ ի դուռ մուրանայ:

ՄԵՐՆ ՎԱՐԴԱՆ ՄԱՄԻԿՈՆԵՍՆԻ ՊԱՏԱՍԽԱՆԸ

Հիմի է՛լ խօսենք, եղբարք, հիմի է՛լ,  
Երբ ընտանեկան երկպառակութեամբ  
Ուրիշ բան չունենք, բայց իրար դուռել,  
Եւ սարսափելի ազգուրացութեամբ  
Մ՛որ նախնեաց ուխտը ոտքով կոխել ենք.  
Հիմի է՛լ խօսենք:

Հիմի է՛լ խօսենք, երբ քաջըն վարդան,  
վաթսուն հազարից, հազարով մնաց,  
Մինչ մնացի՛լ էր Պարսից լոի Մատեան

Գունդը, մե, վաթսուն հազարի դիւաց,  
Երբ մեր վատութեամբ ո՞ղջ կորուսել ենք  
Հիմի է՛լ խօսենք:

Հիմի է՛լ խօսենք, երբ օտարից շատ  
Մենք ենք մեր տղգի արիւնը խմում,  
Մոխրատնով յցինք Դուին, Արտաշատ,  
Ծխի մէջ կորաւ խաչն եկեղեցուն,  
Երբ ա՛ս ամենը մենք կատարել ենք.  
Հիմի է՛լ խօսենք:

Հիմի է՛լ խօսենք, երբ հրապարակում  
Պարսիկը առակ արել է Հային.  
«Եթէ Ասորու նման աշխարհում  
Չկայ մի վատ ազգ, բայց, քան Ասորին,  
է՛լ վատ է Հայը», մենք այս տանու՞ւմ ենք,  
Հիմի է՛լ խօսենք:

Հիմի է՛լ խօսենք, երբ մեր իշխանութիւն  
Ծօխում է անարգ հացկատակներին,  
Մինչ սարուկ մարդիկ նստան մեր գլխին  
Եւ մեզ կարծում են հող իրենց ոտքին,  
Ու մենք մեզ կոխող ոտքը լիզում ենք.  
Հիմի է՛լ խօսենք:

Հիմի է՛լ խօսենք, երբ Լուսաւորչի  
Բնիկ ժառանգի թեւերը կտրած,  
Անարգ Պարսիկը՝ այս ու այն թեմի՝  
Կարգում է տեսուչ ըստ իւր չոր մտաց

Եւ մենք դեռ «կեցցէ արի» գոռում ենք,  
Հիմի էլ խօսենք:

հիմի էլ խօսենք հրք ձեռք ենք տայիս,  
Երբ ողջունում ենք մենք այդ չրքերին,  
Որ դրան շուն են, և մեզ տեսնելիս՝  
Շուտ դիմակները դնում երեսին,  
Այդպիսիներին դարձեալ պատվում ենք.  
Հիմի էլ խօսենք:

Էլ մեր երեսին մնաց մի կաթիլ  
Աժօթի սուրբ ջուր, որ բերան բանանք,  
Ո՛չ, թէ չենք ուզում հողից հող կորչիլ,  
Թշնամու արիւնով մեր թրին ջուր տանք,  
Ազգ, եկեղեցի փրկենք ազատենք,  
Ապա թէ խօսենք,  
Միքաէլ Նայրսեղեան

### ԵՐԳ

Կռուեցէ՛ք տղերք, կռուեցէ՛ք քաջ քաջ  
Միկեհեար կանգնած թշնամոյն առաջ.  
Ցանկալի է մեզ միշտ օգնիւ մահը,  
Հեռո՛ւ մեզանից ոտխի ահը  
Յառաջ խիզախենք իրրեւ նա՛յտակ,  
Ի զուր թող չանցնին մեզնից մի գնդակ:

Ահա՛, քիւրտերը փոխչին սարսափած,  
Ահա՛, դիակներ արեամբ շաղտխուած.

Կրակ տեղացէ՛ք անդադար կրակ,  
Փառք մեր զէնքերուն առատ է զնդակ.

Այս անգամին ալ ցոյց տանք թշնամոյն  
Թէ ինչ է Հայու ոյժն ու քաջութիւն:

Մեզ տօնախմբեն մեր նախնի քաջեր,  
Մեզի կըսպասեն մեր հէգ եղբայրներ.  
Ազատ չը ծնանք, գէթ մեռնինք ազատ  
Մեր սիրտն ու հոգին պահենք անարատ.  
Գէհ կռուէք տըղերք մինչեւ շունչ վերջին  
Արժանի լինել փառաց պսակին:

Մեռնինք յուսալով, մերն է ապագան,  
Մեռնինք, բայց կեցցէ, կեցցէ Հայաստան  
Այսպէս յորգորեց և ինկաւ արին  
Թողլով մեզ անուն յիշատակ բարին -  
Ահեղ կռուի մէջ մի փոքրիկ հերոս,  
Անմոռանալի կտրիճ Մարտիրոս:

### ՁԱՅՆ ՀԱՅՐԵՆԵՍՑ

Օտար ափունք ցրուած ի սփիւռ,  
Ո՛վ սիրասուն իմ զուակունքս,  
Չեր հայրենիք արտում տըխուր՝  
Չեզ կը դիտէ արցունք յաչկուծս.  
Իմ տաճարնհրս սէր կը կանգէ,  
Իմ նախատինքս արիւն սըրբէ:

Ո՛հ, այս քանի՛ տարի անցաւ,  
Ուխտեցիք ինձ սէր, յոյս և կեանք.

Ամուլ մըրցում, հեռ վիշտ և ցաւ,  
 Այս իմ բաժին, ա՛յս է ձեր ջանք.  
 Իմ տաճարներս սէր կը կանգնէ,  
 Իմ նախատինքս արիւն սըրբէ:

Հընո՛ց՝ ս՛վ դուք որ օտարին,  
 Փառաց պատուոյ էք խընրարկու.  
 Անմահութեան դրօշմ, սէր ազգին,  
 Նախնեաց քրտինք ծախած շքոյ,  
 Իմ տաճարներս դուք չէք կանգներ,  
 Իմ նախատինքըս դուք չէք սրբեր:

Կ'անցնին այսպէս անթիւ օրեր,  
 Ես յաւերակըս նստած յերեր,  
 Իրբեւ այրի հըրոյ մատնուած,  
 Կոյս ոյր օժիտն է անարգուած,  
 Գոչեմ, տաճարս ո՞վ կը կանգնէ,  
 Իմ նախատինքըս ս՛վ կը սրբէ:

Ե. Մոռարտեան

### ՎԵՐՋԱՐԱՆ

Լըռեց, Ամպերը եկան ծածկեցին  
 Երկինքն, ու լուսինն աչքէս խըլեցին.  
 Մընացի մենայ՝ հոգիս վըրդոված,  
 Չիւններըս ծոցիս, գլուխս քարշ արած:  
 Եւ այնուհետեւ ամեն իրիկուն  
 Մընում եմ լուսնի խաղաղ ծագելուն.  
 Նորա տըխրամած դէմքը նայելիս՝

Յիշում եմ թշուառ վիճակը ազգիս,  
 Ախ, ցոլա՛, փայլէ՛, տխրագէմ լուսին,  
 Գուցէ՛ քու փայլեց փայլ տաս և հային,  
 Պատմէ՛ շատերուն վարդանի մահը,  
 Կամ ինչպէ՛ս կորու հայ ազգի գահը,  
 Կամ ինչ վեհ սիրով սիրում էր վարդան  
 Մայրենի հողը, — աշխարհն Հայաստան:  
 Գաւառ-Քարիպա

### ԵՐԳ ՀԱՅՐԵՆԱՍԻՐԱՆ

Տուր ձեքոգ, եղբայր, ժամ է զարթելու  
 Ժամէ ժամ յառաջ ոտքի ելլելու.  
 Մօտ է վախճանին հայերու օրհաս,  
 Լինել չլինել մեզնից է կախուած:

Տուր ձեքոգ, եղբայր, հերիք համբերենք  
 Հերիք օգնութիւն ուրիշից հայցենք,  
 Մենք ենք տանջուողը, մենք չարչարուողը  
 Մենք պիտի լինինք մեզի փրկողը:

Մ'որ վեհ հայրենիք դարհրելի ճնշուած  
 Դարեր շատ ու շատ մեր արեամբ ներկուած  
 Պահանջէ մեզնից արիւնով ներկել  
 Թշնամու արեամբ լեռներ ու դաշտեր:

Շտապիր, եղբայր, ա՛ն ահա քեզ զէնք  
 Սըրանով միայն փրկուելու ենք մենք  
 Այս է գործածում մեր դէմ թշնամին,  
 Այս պիտի լինի պաշտպան մեր անձին:

Շտապիր, եղբայր, ի դաշտ պատերազմ  
Սպասում է քեզ թշնամին մեր կազմ,  
Աշխարհի սկզբից ամբողջ մարդկութիւն  
Այն տեղ է գտել իւր ազատութիւն:

Այն տեղ է քո կեանք, աշտեղ է քո մահ,  
Ելի՛ր ընդ առաջ, ելիր դու անահ,  
Սրբարութիւն է գործին նշանակ,  
Այն տեղ կը կանգնէ նա իւր յաղթանակ:

Շտապիր, քանի դեռ չէ անագան  
Քեզ կը հետեւի ամբողջ հայաստան  
Ազատութիւն է գործին գրաւական  
Այն տեղ կը ըստանաս պսակ պատուական:

### ՎՏԱՐԱՆԴԻՆ

Թէպէտ վրասը քաղքէ քաղք կամ թափառ,  
Բաղդ ու մարգիկ զիս հալածեն անգթաբար,  
Այլ տրդէն իսկ ազատութեան երբ վեհ ձայն  
Թուա բերնէս, յանձն առի զայս վիշտս համայն.  
Ազատութեան ես անձնուէր,  
Վիշտ, ցաւ սիրով եմ յանձն առեր:

Թէպէտ հեռի իմ սիրելեաց գիրկերէն,  
Հեռի անոց գողտրիկ ձայնէն, երգեսէն,  
Տըխուր քնարս նոճիներէն վաղ կախած,  
Լըռիկ ողբամ խեղճ ազգիս բաղդն մըտալած.  
Ազատութեան ես անձնուէր, եւն:

Թէպէտ յաչացս դառն հոսեն արտասուք,  
Յայտնել սըրտիս կարօտն ու սուգ և պսսուք.  
Այդ արտասուք սըրտիս վէրքերն լուանան,  
Վէրքեր, զորոնք Ազգիս ցաւերն հոն բանան.  
Ազատութեան ես անձնուէր, եւն:

Վտարանդի: Թէպէտ դառն են այս օրեր,  
Օր մ' ալ տեսնես նպատակիրդ ես հաւեր.  
Ազատութեան յաղթանակը քու ձեռքիրդ,  
Վարդն ու շուշան պըստկ պըճնել գան ճակտիրդ.  
Ազատութեան ես անձնուէր, եւն:

Մ. Փօրթոզգաշեան

### ԻՄ ՄԱՀԸ

Եթէ դժգոյն մահու հրեշտակ  
Անհուն ժպտով մ' իջնէ իմ գէմ,  
Շոգիանան ցաւքս ու հոգիս  
Գիտցէ՛ք որ դեռ կենդանի եմ:

Եթէ սրնարս իմ տիպար  
Մոմ մը վըտիտ ու մահադէմ,  
Ո՛հ, նըշուէ ցուրտ ճոռագալթ,  
Գիտցէ՛ք որ դեռ կենդանի եմ:

Եթէ ճակտովս արտօսըացօժ  
Ձիս պատանի մէջ ցուրտ զերդ վէմ  
Փաթթեն, դենն սեւ դադաղը,  
Գիտցէ՛ք որ դեռ կենդանի եմ:

Եթէ հընչէ տխուր կոչնակ,  
Թրթռուն ծիծաղն մահու դժխեմ,  
Դագազս առնէ իր համըր քայլ,  
Գիտցէ՛ք որ դեռ կենդանի եմ:

Եթէ մարդիկն այն մահերգակ,  
Որք սել ունին ու խոժոռ դէմ,  
Համասփռեն խունկ ու աղօթք  
Գիտցէ՛ք որ դ՛ու կենդանի եմ:

Եթ՛ յարդարեն իմ հողակոյտ,  
Ի՛նչ հեծեծմամբ ու սրցալէն  
Իմ սիրելիքը բաժնուին,  
Գիտցէ՛ք որ դեռ կենդանի եմ:

Իսկ աննրչան եթէ մնայ  
Երկրի մէկ խորչն հողակոյտն իմ,  
Եւ յիշատակս ալ թառամի,  
Ո՛հ, այն ատեն ես կը մեռնիմ:

Պ. Գոշրեան

ԵՐԳ ՊՍԵՄՏՈՒԹԵԱՆ

Հեռո՛ւ եմ քենէ, օտար երկրի մէջ՝  
Եղած եմ պանդուխտ, սիրո՛ւն հայրենիք  
Ի լեռ և ի ձոր կընեմ ելուէջ,  
Քեզ չեմ տեսներ ես, սիրուն հայրենիք

Ճարտարախօս չեմ Միլտոնի նման  
Որ գրախառի մը նմանցընեմ քեզ

Եւ ոչ Եունկի պէս ճարտարամիտ եմ,  
Որ գովաբանեմ, սիրո՛ւն հայրենիք:

Տելիմաքի պէս քաշեմ արկածներ,  
Կը պատահին ինձ ձախորդ դիպուածներ,  
Քեզ մոռնալո՛ւ եմ, երբէք չեմ կարծեր,  
Ծնած եմ քո մէջ, սիրո՛ւն հայրենիք:

Կերեւակայեմ մտքիս մէջ քեզ միշտ,  
Չէ թէ ցորեկներ, գիշերներ ի բուն  
Երբոր մըրաբեմ կամ բլլամ ի քուն,  
Երազներս ես դու, սիրո՛ւն հայրենիք:

Լեռներդ ծագիկով, դաշտերդ շուշանով,  
Լեցուն ես միշտ դու անուշ հոտերով,  
Թէ որ ես քողեմ խոռըն խոտերով,  
Կը հուտուբտամ քեզ, սիրո՛ւն հայրենիք:

Երբ կուգայ գարուն, կը բացուին վարդեր  
Խմբակ կը կազմեն երիտասարդներ  
Պար առեալ ցնձան և օրիորդներ,  
Երգելով բերկրիմ, սիրո՛ւն հայրենիք:

Չարդարուած պարուկդ անուշ միրգերով  
Առ ափն Եփրատայ պատուական դիրքով  
Քեզ գովաբանիլ կուզեմ նոր երգով,  
Քարբերդ քաղաքն իմ, սիրո՛ւն հայրենիք:

ԱՐՏԱԻՍՉԴ Ի ՎԻՀՆ ՄԱՍԵՍՑ

Գարունն էր կենացս դեռ ,  
 Երկինք ինձ նայէր հաշտ ,  
 Ինձի համար ձոր , լեռ ,  
 Ծաղկէր և դալար դաշտ :  
 Թագն էր զարդ իմ վարսիս ,  
 Քաջաց մէջ էի պերճ .  
 Ծուռ զիս զըրկեց Մասիս ,  
 Փռուքիս վաղ հասաւ վերջ :

Հեծայ ի սեաւ իմ վեհ ,  
 Մեցայ յուրջ մարգերէ ,  
 Որսալ ի Գինայ դեհ :  
 Յիւ և պարարտ երէ :  
 Ողջոյն լերինք ու ձոր ,  
 Ողջոյն տուն ծառեր :  
 Անշունչ նիւթերն բոլոր  
 Լիզու էին առեր :

Բարէ՛ , յանկարծ կասեաց  
 Ոտք իմ աշխոյժ սելոյս ,  
 Կալան զիս քաջք Մասեաց ,  
 Տարան ի վիհն անլոյս  
 Փոխաւ , թըռաւ արիւս ,  
 Ողբա՛ զիս Սաթինիկ .  
 Ա՛ռ իմ վերջին բարեւս ,  
 Ազնիւ իմ Հայրենիք :

Ինչու՞ բարբ մարգիկ  
 Ինձի դէմ են ելեր .  
 Ինչու՞ այսպէս սաստկ  
 Կ'գոռան ժրճեր , սալեր :  
 Անդերձ եմ իմ կապէս ,  
 Ի զուր ազգքս կ'խորհի .  
 Կըրնա՞յ հէգ մ'ինձի պէս .  
 Վախճան տալ աշխահի :

Անէ՛ծք կը կոպեն զիս ,  
 Երնիկքս , զուր կը մաշեո  
 Ակռադ , զանուր վըզիս  
 Կապեց հայրս Արտաշէս :  
 Խիստ , խիստ են հօր մ'անէ՛ծք .  
 Դառն են և ահագին :  
 Անով կըլլան , ո՛ր մեծք .  
 Ոչ ինչ փառք ձեր թապին :  
 Ե. Զօհրապեան

ՎԱՆԵՅԻՈՅ ՀԱՅՐ - ՄԵՐԸ

Հայր մեր երկնաւոր՝ սուրբ լա քու անուն ,  
 Հայրն երկրաւոր տո՛ւր այլ քայութիւն .  
 Ամեն բանի մէջ քու կամքը թող՛ լա ,  
 Միայն թէ Հայր լուծի տակ չի լա .  
 Ոչ չոր , ոչ կահուղ հացըդ մենք կ'ուզենք ,  
 Միայն տո՛ւր ամեն Հայի ձեռքը զէնք .  
 Չենք խնդրիլ թողնիլ մեր անձանց պարտքը ,  
 Թէք վերցուր թուրքի խայտառակ հարկը .  
 Գլորէ՛ մեզ , Աստուած , մարտի փորձութեան ,  
 Որ շուտ ապարտի պղտոր զո՛ւ Հայկեան .



Գրանիւն - Բարսիպա

# Յ Ա Ն Կ

	Երես
Ազատ Առատուածն այն օրից . . . . .	33
Ազատութեան այն վառ սէրը . . . . .	27
Ազատութեան քաջ գինուորին . . . . .	96
Ա՛խ Հայրենիք գտնձս ու հոգիս . . . . .	9
Ահա բաժակ ուրախութեան . . . . .	67
Ահա ելաւ լուսին արծաթ . . . . .	44
Ահա մայրիկ ա՛նա կերթամ . . . . .	28
Այն որ ծանօթ է պատմութեան ազգին .	45
Աշխոյժ նաւաստին . . . . .	46
Արիք ընկերք քաջակորովք . . . . .	60
Ապառաժուտ լերան մը կողմ . . . . .	90
Առնկալ ի գերիքս մայրդ Հայաստան .	104
Արկածք Հայոց ժամանակին ընդ անիւ .	39
Արիք Հայկազունք յառաջ ընթանանք .	109
Բամբ որոտան բարձուստ . . . . .	105
Գարունն էր կենացս զեռ . . . . .	124
Դատարանին իմացուցին . . . . .	74
Դու զո՞վ խնդրես մայր իմ անուշ . . . . .	13
Դուն խելօք հաշուով վաճառական ես . . . . .	35
Դու փափկաթեւ մանկիկ զեփիւռ . . . . .	70
Եկել է գարուն սոխակը սիրուն . . . . .	82
Երբոր ազգին գահը փլաւ . . . . .	49
Երբ բացուին դռներն յուսոյ . . . . .	51
Երբ օդը անձրեւի է . . . . .	68
Երկիր քսջողանց քանի սուգ աչեր . . . . .	108
Եկէք հղբարք քոյրուհիւ . . . . .	111
Եթէ դժգոյն մահու հրեշտակ . . . . .	121
Է՞ր հեռանաս քո մայրենի աշխարհից .	47
Ընդ աստեղօք օտար ափսոյց . . . . .	79

Ընկերք յաղթութեան ժամն է արդ հաճեր .	81
Թէ թեւ ունէի ո՛ն կը թռչէի . . . . .	57
Թէ իմ հայրենեաց քնար սգաւոր . . . . .	24
Թէ Հայրենեաց պսակադիր . . . . .	85
Թէ իմ ալեւոր հերքս սենային . . . . .	30
Թէպէտ վտար քաղքէ քաղաք . . . . .	127
Թմբած Հայը զարթեցաւ . . . . .	92
Թողէք զիս անէծք ոճիրք մշտառեւ .	15
Թող կորնչին տաճիկները . . . . .	99
Ի բիւր ձայնից բնութեան շքեղ . . . . .	40
Ի զո՛ւր են ի զո՛ւր բընձաւոր . . . . .	9
Իմ Հայրենեաց արեւ վարդան . . . . .	12
Իմ հայրենիք զիս կը կանչէ . . . . .	20
Իմ սիրելի գաւաղունքս . . . . .	32
Լուսն : Ամպերը եկան ծածկեցին . . . . .	118
Մի՞ծեռնակ ծիծեռնակ . . . . .	19
Կապոյտ երկնքում ասուղեր են փայլում .	112
Կեանք մ՛ ունէի մահուան հնթակայ . . . . .	97
Կռունկ ուսկի՞ կուգաս ծառայ եմ ձայնիդ .	77
Կռուկէք աղերք կռուկէք քաջ քաջ . . . . .	116
Հայր մեր երկնաւոր . . . . .	125
Հայ ապրինք , հղբարք , մարդկութեան .	55
Հայոց աղջիկներ , ձեր հոգուն մատաղ . . . . .	48
Հայրենեաց սիրով վառուած վե՛հ սրտեր .	72
Հայրենիքի մէջ մեր հղբարք կողբան . . . . .	83
Հայրիկ հայրիկ քո Հայրենիք . . . . .	42
Հապա քաջազունք , հայոց զաւակունք . . . . .	61
Հասաւ արդ ժամ փառաց . . . . .	39
Հասաւ արդ ժամ փառաց . . . . .	29
Հերիք որդեալ այսքան տարուան . . . . .	86
Հիմի՞ էլ լունք , հղբարք հիմի՞ էլ . . . . .	114
Հիմի է՛լ խօսենք հղբարք . . . . .	122
Հետու եմ քենէ օտար երկրի մէջ . . . . .	80
Չայնը հնչեց էրզրումի հայոց լ՛ուներէն .	

Զայն տուր ով ծովակի ինչո՞ւ լռում ես	30
Մայր—Արաքսի ափերով	16
Մեզի մոռցաւ Հայոց ազգը	75
Մեր Հայրենիք թշուառ անտէր	36
Մեր քաջ Հայոց զօրութիւն	10
Մեր սիրուն վայելչական	113
Մինչեւ մահու անյիշատակ ի շիրիմ	42
Մնացես բարեաւ սէր իմ, սէր	105
Մտաւ արեւ երջանկութեանս, դիտիս	95
Յազանն ի վեր ի Մասիս	65
Ոլոր մոլոր Կուրն է գալիս	88
Ո՛հ ի՞նչ անուշ եւ ի՞նչպէս զով	22
Ողջոյն տուէք իմ Հայրենեաց	59
Ո՛չ եղբարք ո՛չ օտարներէն չկայ յոյս	100
Ոչ փող զարկինք ոչ արձագանք լեռնասոյգ	91
Ո՛վ մեծասքանչ դու լեզու	62
Որն է աշխարհ Հայաստան	58
Պիղփիկ տղայ՝ չեմ օրօրել օրօրանքըդ	76
Ռուսական պետութիւն հայեր ըսաւ	73
Մասուն ելաւ անբռնամբից	52
Տալօրիկի կարիճ եմ զորթ	6
Տեսէք ազաւնին Նոյեան տապանին	64
Տէր կեցո՛՛ դու ըզհայս	5
Տուր ձեռքդ եղբայր	119
Քաղցր հայրենեաց ազատութեանը համար	11
Քանի թմրինք բաւ է եղբարք	50
Քանի տարի է Հայրենիք սիրուն	23
Օ՛ն եկայք արի Հայեր	84
Օտար երկիր թափառած	103
Օտար ափունք ցրուած սփիւս	117



20064

2013

